

«ԳԻՏ-ԴԱՍ» ՄԱՏԵՆԱՇԱՐ ԹԻՒ 1

ԱՆՍԱՆՁ

ԹՌԻՉՉՈՔՆԵՐ

ԳՐԱՑ

ԱՕՑԵԱՆ

Հրատարակութիւն

«ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵԽ ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒՅՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ՆԻԿ ԵՕՐԿ

1923

Նըները վերապահ-
կութիւն» Հրատա-

«ԳԻՏ-ԴԱՍ» ՄԱՏԵՆԱԿԱՐ ԹԻՒ 1

* 891-99
U- 78

49

ԱՆՍԱՆՁ

ԹՌԻԴՉՔՆԵՐ

ԳՐԵՑ

ԱՕՑԵԱՆ



Հ ր մ տ ա բ ա կ ու թ ի ն

«ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ»
ՀՐԱՍՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Ն Ի Ւ Ե Օ Ր Կ

1923

Հ 5-7/25

ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐՈՒ ԿՈՂՄԷՆ

Հայ ընթերցողը կտառապի գրքերու սովէն։ Ուղղակի ողբերգական կացութիւն մը կայ այս հայ ընթերցողներու համար, որոնք ճաշակեր են զիտութեան պատուղէն, կուղէն հարուալ եւ միայն հայերէնն է իրենց մատչելի։ Անոնք հայերէն զիրք չեն դաներ, իսկ օտար լեզու ալ չեն զիտեր։

Մանաւանդ ներկայիս, երբ զոյութիւն ունի Բանասրա-Գիւղացիական Խորհրդային Հայաստան։ Երբ Ռուսական Մւծ Յեղափոխութիւնը կընդարձակւի եւ կիսուանայ։ Երբ բոլոր հին կարգերը, բոլոր հին ըմբռնողութիւնները կիսորատակւին, Հայ աշխատաւորներն անզուսպ ձգտում մը ունին՝ ընկերային, անտեսական, քաղաքական խնդիրներու վերաբերմամբ գրքնը ունենալ եւ կարդալ։

Սիսակ է կարծել թէ՝ Հայը ընթերցասէր ժողովուրդ մը չէ։ Իրողութիւնն այն է, որ Հայ ընթերցողը ժողովուրդին մատչելի լեզուվ գրւած եւ օգտակար զիրք չգտներ կարդալու։

Ռուսներէնի կամ Եւրոպական ունէ մէկ լեզուի ծանօթ Հայ ընթերցողը իր այդ պահանջին դոհացում կըտայ օտար գրականութենէն։ Բայց այն Հայ ընթերցուր, որուն մատչելի է միայն Հայերէնո, չունի ունէ միջոց՝ իր ծարաւին գոհացում տալու։ Որոշ զիտու-

թիւններու շրջանէն հայերէն գրքեր չդտներ ան . իսկ շարք մը զրքեր ալ , որ պատահարար անոր ձեռքը կանցնին , կամ գժւարահաճ են իրենց լեզով եւ նիւթը ներկայացնելու եղանակով , եւ կամ անվատահելի՝ իրենց բովանդակութեամբ :

Կամ ենալով գէթ մասամբ լրացնել այդ մէծ պակասը , մանաւանդ ամերիկահայ միջավայրի մէջ , մէնք հիմներ ենք «Գիտութիւն» եւ «Դաստիարակութիւն» Հրատարակչական Ընկերութիւնը :

Մեր Հրատարակութեամբ լոյս տեսնող գրքերը , որքան որ անոնք ընթերցանութեան շրջանը կշօշափին , իրենց նիւթը պիտի ներկայացնեն մէկ որոշ աշխարհայեացքի վրա . ոչ-ընկերային բնոյթ ներկայացնող գրքերը՝ այնպիսի տեսակէտով մը , որ կթելազրւի գիտութեան բարձրագոյն մակարդակէն : Երբեմն պիտի Հրատարակենք գրական կամ կէս-գրական բնոյթ ունեցող գրածքներ եւս , որոնք նոյնպէս Համերաշխած պիտի ըլլան մեր ընդհանուր ուղղութեան հետ : Մեր ուղղութիւնը ընթերցողները պիտի տեսնեն մեր իսկ Հրատարակութիւններէն :

Ընկերութեանս կողմէ Հրատարակուղ գրքերու առաջնորդող սկզբունքներն են՝ գիտական վերլուծում , նիւթի ամփոփ ներկայացում , մատչելի լեզու , խնամւած տպագրութիւն , չափաւոր գին եւ լայն տարածում : Ընթերցողներու կողմէ լաւ ընդունելութեան արժանանալով՝ մենք ունեէ ջանք չպիտի խնայենք այս սկզբունքներն անթերի կերպով իրականացնելու մեր Հրատարակութիւններով :

Մենք մեր Հրատարակութիւններու շարքը կոկորինք համարեա առանց նիւթական միջոցներու , սակայն բարոյական մէծ դրամագլխով : Մենք կհաւատանք թէ մեր գործը ընդհանուր շահեկանութիւն ներկայացնող գործ

մըն է եւ հանրային խրախուսանքի պիտի արժանանայ հայ աշխատաւորներու կողմէ : Մենք-ունինք այն վաստակութիւնը թէ մեր ընթերցողները եւ մեր ձեռնարկին համակիրները պիտի օժանդակեն մեզ նիւթապէս եւ բարոյապէս :

Ընկերութեանս անդամ եւ պատւաւոր անդամ ըլւալու պայմանները կարելի է կարգալ դրքիս կողքի վերջին թերթի վրա, ներսը :

* * *

Մեր ընկերութեան՝ «Գիտութիւն եւ Դաստիարակութիւն» անունը տւած Ենք : Գիտութիւն բառը չատընդարձակ իմաստ ունի . մենք սակայն, առաւելապէս ընկերային գիտութիւնն է, որ կուզենք չեշտել :

Դաստիարակութիւնը եւս ընկերային դաստիարակութեան մտքով է, որ գործածած Ենք :

Գիտութիւն եւ դաստիարակութիւն երկու մարզեր Են, որ փոխադարձարար պէտք ունին իրարու, զիրար կլրացնԵն :

Գիտութիւնը հաստատուն հիմք մը կտայ լաւ դաստիարակութեան : Եւ լաւ դաստիարակութիւնը զիտութեան տւածները կրեղմնաւորէ կեանքի մէջ :

Մեր ընկերութեան համար պիտի գործածԵնք «Գիտ-Դաս» կրամաւած ձեւը :

* * *

Շատ բան չունինք ըսելու ներկայ Հրատարակութեան մասին : Ընթերցողներն իրենք պիտի կարենան արժանաւորապէս գնահատել Սօցեանի այս փոքրիկ բայց նշանակալից եւ ինքնատիպ գործը : Արդէն հեղինակը ընթերցողներու կողմէ բազմիցս արտայայտւած բաղ-

ձանքներուն գոհացում տալու համար է, որ որոշած է «Անսանձ թոփիչքներ»-ը առանձին զրքոյկով լոյս ընծայել:

Այս գործը չպիտի նկատել, հարկաւ, որպէս զուտ զրական բնոյթ ունեցող զրւածք մը: Հեղինակը կրցեր է կէս-զրական բնոյթ ներկայացնող յարմար ձեւ մը դանել՝ ընկերային որոշ երեւոյթներու վերաբերմամբ որոշ ըմբռնողութիւններ եւ ձգտումներ տպաւորելու համար ընթերցողի մտքի մէջ: Կարճ ժամանակւայ ընթացքին՝ հեղինակի գտած ժողովրդականութիւնը ապացոյց մըն է, որ որոշ պահանջի եւ տրամադրութեան գոհացում տալու կոչւած է անոր զրւածքը: Պարզ եւ կոկիկ յեզուն, արտայայտութեան պատկերաւոր եղանակը, ինքնատպութիւնը եւ երեւակայական թոփչքը Սօցեանի «Անսանձ թոփիչքները» կդարձնեն ընթերցանութեան ամենահաճելի նիւթերէն մին:

Աւրախ ենք յայտնելու մեր ընթերցողներուն, որ Սօցեանի ուրիշ մէկ գործը՝ «Անհաւատի Նամակները» պիտի կրնանք շատ շուտով լոյս ընծայել՝ որպէս մեր մատենաշարի թիւ 2 հրատարակութիւնը:

Մէնք կուղենք հայ ընթերցողներուն տալ կարդալու համար օգտակար զրքեր, եւ միայն կսպասենք որ հայ ընթերցողները մեր հրատարակութիւնները գնեն եւ կարդան:

ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐ

ՆԱԽԱԲԱՆԻ ՏԵՂ.

Թրախուռաւած մի շաբք բարեկամների յորդորներից
եւ այն ընդունելութիւնից, որ «Անսանձ Թոփչիչներ»-ը
գտել են ընթերցողների մօտ, հրատարակութեան եմ
առաջս այս պրակը: Ուրիշ պրակներ էլ պիտի հետեւին:

ՍՕՑԵԱՆ

ԴՈՒ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ԵՍ, ԵՍ՝ ՈԶ

Այս', դու հայրենասէր ես: Դու շատ հայրենասէր ես:

Եւ ինչո՞ւ հայրենասէր չլինիս:

Այդ անհատնում ոսկիները, որ դու դիզած ունիս, ՔՈ հայրենիքի մէջ ես ձեռք բերել:

Այն սխանչելի ապարանքը, որի մէջ դու ապրում ես, ՔՈ հայրենիքի ստրուկներն են շինել ՔԵԶ ՀԱՄԱՐ: Այն մարմարեայ սիները, որ իրենց վրա կը-րում են քո ապարանքի ծանրութիւնն ու շեղութիւնը, ՔՈ հայրենիքի հանքերիցն են ստացւել:

Այն գեղանի կինը, որի հետ կողֆ-կողֆի նստած՝ կառ քով սուրում ես դէպի եկեղեցի եւ դէպի պարահանդէս, ՔՈ հայրենիքի մէջ է ծաղկել, փր-քել, նրա օդը ծծել եւ նրա ջրովը գովացել:

Ինչո՞ւ չպիտի սիրես ՔՈ հայրենիքը: Խ՞նչպէս կարող ես չսիրել ՔՈ հայրենիքը: Խ՞նչ պատճառ ունիս չսիրելու նրան:

Թող չար մարդիկ հազար անգամ ասեն, որ դու չես սիրում ՔՈ հայրենիքը՝ որովհետեւ աղքատ չես, ընշագուրկ չես:

Ես բարձրադադակ կերպով պիտի գոչեմ մշտապէս, որ դու շատ եւ շատ սիրում ես նրան՝ որովհետեւ հարուստ ես, ունեւոր ես:

ՔՈ հայրենիքը քո դեմ ունէ մեղք չի զործել:
Նա քո դեմ դաժան չի գտնւել: Նա քեզ քաղցած չի
պահել. նա քեզ չի զրկել:

Դու էլ ունէ պատճառ շունիս նրա դեմ մեղան-
չելու: Դու իրաւունք շունիս նրան զրկելու քո սի-
րուց: Դու պէտք է սիրես նրան:

Եւ դու սիրում ես, շատ սիրում ես ՔՈ հայրե-
նիքը:

* * *

Այ, հիմա ձմեռ է:

Հիւսիսային պաղ հողմերը զալիք ձիւնն եւ սա-
ռուցն են ազդարարում: Հազարաւոր մարդիկ շուտով
պիտի մնան առանց տաքուրեան, առանց տաք օրե-
ւանի, առանց տաք կերակրի:

Դու քո մարմարաշէն բնակարանի բոլոր դռները
եւ պառուհանները պինդ զոցել պիտի տաս: Երեք
ամիս շարունակ մարդկային շունչ չպիտի լինի այն-
տեղ: Դու պիտի նստիս շոգեկառքի տաքուկ սեն-
եակի մէջ, որ ՔՈ հայրենիքի սեփականուրիւնն է
կազմում, որ նրա մէջ ապրող ստրուկների ձեռքե-
րումն է ստեղծագործւել, եւ նամքայ պիտի ընկնիս
դէսի Հարաւ, որ դարձեալ ՔՈ հայրենիքի մէջ է
գտնւում:

Այնտեղ ձիւմ չկայ: Այնտեղ ցուրտ չկայ: Արեւը
ուկու պէս փայլում է: Երկինքը ջինջ է եւ կապոյտ:
Օդը՝ մաքուր եւ կազդուրիչ: Կեանքը՝ շեղ եւ հեշ-
տալի:

Ամեն տեսակ հանոյք, ամեն կարգի գւարնուրիւն
դու պիտի գտնես այնտեղ, — ՔՈ հայրենիքի Հա-
րաւում:

Ժամանակ պիտի գայ, երբ Հարաւն էլ չնայած իր բոլոր հրապոյրներին, ֆեզ պիտի ձանձրացնի: Դու քն կնոջը եւ զաւակի հետ նաւ պիտի առնես եւ նեղդես կապուտակ, լազուր ծովը, որ դարձեալ ՔՌ հայրենիքի սահմանների մէջ է: Ծովի զովուրեանը մէջ պիտի շրջագայիս, մի ափից դէպի միւսը, մինչեւ որ դրանից էլ ձանձրանաս:

Այնուհետեւ պիտի բարձրանաս մօտակայ լեռները, որոնց զագարների վրա ձիւնի շերտերն են սպիտակին տալիս. խակ ստորոտներում բարմ կանաչներն են ընձիւդում:

Դու շարունակ հանելի օրեր պիտի անցնես: Մըշտապէս շրջապատած պիտի լինիս հրապոյրներով . . .

* * *

Ահա', այդպէս է ՔՌ հայրենիքը: Ահա', այդշափ խնամքով, զուրգուրանքով է նայում ՔՌ հայրենիքը ֆեզ վրա: Ահա', այդպէս ես ապրում դու ՔՌ հայրենիքում:

Ինչո՞ւ պիտի առես նրան: Ինչո՞ւ չպիտի սիրես նրան:

Թող նրան ատեն այն հարիւրաւոր եւ հազարաւոր խորք, անարժան զաւակները, որոնք քն բացակայութեան ժամանակ անցել են քն ապարանքի մօռով եւ երանի՝ տւել քն շանը, որ սիրուն տնակի մէջ, մարմարեայ սանդուդքների ներքեւ, իր տիրոջը ինչքը պաշտպանել է հաւատարմաքար:

Դու ինչո՞ւ չպիտի սիրես ՔՌ հայրենիքը: Ինչո՞ւ պաշտպանունքի առարկայ չպիտի դարձնես նրան:

Պատճառ ունի՞ քն շունը ֆեզ չսիրելու, քն տունը

շսիրելու, նրան չպաշտպանելու, ուր նա այնքան գուրզուրանքի եւ խնամքի է արժանանում:

Պատճառ ունի՞ս դու ՔՈ հայրենիքը շսիրելու, որ այնքան բախտաւորութիւններ է տալիս ֆեզ:

* * *

Այս', ես ֆեզ հաւատում եմ. բռդ ուրիշները հազար անգամ կասկածեն, ես հաւատում եմ, որ դու ՔՈ հայրենիքը սիրում ես. շա՞տ ես սիրում:

Դու նանաչում ես նրա բոլոր ռքանչելի անկիւնները: Դու եղել ես նրա բոլոր գեղեցիկ վայրերի մէջ: Դու վայելել ես ամեն տեսակի հանոյք՝ նրա երկնակամարի տակ: Լալից, գեղեցկից, հանոյականից բացի դու ուրիշ ոչինչ չես տեսել ՔՈ հայրենիքում:

Ինչո՞ւ չպիտի սիրես նրան: Ինչո՞ւ նա չպիտի ապրի քո սրտի մէջ, քո մտքի ծալքերում:

Դու զիտես այն լեզուն, որ ՔՈ հայրենիքում խօսւել է հազարամեակներ շարունակ: Դու ծանօթ ես ՔՈ հայրենիքի պատմութեան: Դու եւ ֆեզնամաններն եք, որ հոստատել եք կարգ ու կանոն ՔՈ հայրենիքի մէջ: Ֆեզ եւ ֆեզնամանների համար է. որ ՔՈ հայրենիքի կառավարութիւնը զոյութիւն ունի: Ֆեզ համար, քո գաւակի համար, քո կնորդ համար է. որ ՔՈ հայրենիքի գեղարւեստի տաճարները հաստատած են:

Ի՞նչ պատճառ ունիս շսիրելու նրան:

ՔՈ հայրենիքի բարքերն եւ սովորութիւնները քո ընտանիքի բարքերն ու սովորութիւններն են:

ՔՈ հայրենիքի մէջ ինչող երգերը դու՞ւ ես լսու շարունակ: Այնտեղ գտնուող քաղաքակրթական բարիքները ֆեզ համար են միայն:

ՔՈ հայրենիքի բոլոր մեծ վարպետների գրքերը

ոսկեզօծ կողքերով դու ունիս քա գրադարանում:

Բոլոր զեղագէտների ստեղծագործութիւնները դու կարողանում ես տեսնել պալատանման շենքերում, լսել եւ վայելել նրանց:

Ինչո՞ւ չպիտի սիրես այդպիսի մի հայրենիք:

ՔՈ հայրենիքը մշտապէս քեզ Համար է: Ինչո՞ւ դու էլ ՔՈ հայրենիքի համար չպիտի լինիս:

Դու շա՞տ սիրում ես նրան: Շա՞տ պիտի սիրես նրան, որովհետեւ շա՞տ հարուստ ես, բարիքներ շա՞տ ունիս, որ ՔՈ հայրենիքից ես ստացել:

Ոսկի է նա քեզ համար: Գանձ է նա քեզ համար:

* * *

Խակ ե՞ս...

Ո՞ւր է իմ հայրենիքը: Ի՞նչ է իմ հայրենիքը:

Ո՞ւր է իմ հայրենիքի Հարաւը: Ո՞րն է նրա Հիւսիսը:

Ես էլ, իրաւ է, քեզ պէս այնուեղ եմ ծնւել: Բայց ես քեզ պէս ապրե՞լ եմ այնուեղ: Ես առհասարակ ապրե՞լ եմ:

Ծննե՞լ: Միքէ՞ այս էլ մոլորութիւն չէ: Միքէ՞ ես ծնւել եմ իմ Հայրենիքում: Միքէ՞ հայրենիք է այն կեդտոտ, փոքրիկ, անլոյս եւ անտառութիւն նըկուղը, ուր որ ես «լոյս» աշխարհ եմ եկել:

Ես ծծե՞լ եմ իմ հայրենիքի օդը:

Ես շարունակ չե՞մ ներշնչել այն քանձը եւ ծխառատ մքնուրուրը, որով շրջապատուած է եղել իմ աշխատանոցը:

Միքէ՞ ես աւելի ընդարձակ հայրենիք ունիմ, քան այդ աշխատանոցն է: Միքէ՞ ես ուրիշ կեանք եմ ունեցել, որ կապւած չլինի այդ աշխատանոցի կեանքի հետ:

* * *

Այս՝ երբ ես մի օր հազարաւոր մղոններով հեռանամ «իմ» հայրենիքից, ես պիտի տեսնեմ սարեր, որ իմ հայրենիքի նման չեմ. ձորեր, որ շատ տարրեր են իմ հայրենիքի ձորերից:

Բայց ես որքան էլ հեռու գնամ «իմ» հայրենիքից, ուր էլ որ ես քրտինք քափեմ, ես մշտապէս չպիտի՞ ծծեմ նիշտ այն օդը, որ ես ծծել եմ իմ աշխատանցի մէջ քանի եւ հինգ տարի շարունակ: Աշխարհի ո՛ր ծայրն էլ որ ես գնամ, ո՛ր մէկ երկրի մէջ էլ որ ես իմ քախոր որոնեմ, ես անընդհատ չպիտի՞ շնչեմ այն ծուլօր, որ շնչել են նաեւ իմ ծնողները, իմ եղբայրները, իմ քոյրերը:

Ես ի՞նչպէս սիրեմ այն հայրենիքը, որ չեմ տեսել:

Ես ի՞նչպէս սիրեմ «իմ» հայրենիքի մշակոյքը, որ չեմ նանաչում:

Ես ի՞նչպէս սիրեմ նրա լեզուն, որ դժւարութեամբ եմ խօսում եւ դժւարութեամբ հասկանում:

Ես ի՞նչպէս ուրախանամ «իմ» հայրենիքով, երբ վայելք չեմ տեսել այնտեղ:

Ես ի՞նչպէս հպարտանամ նրանով, երբ գիտեմ քէ իմ զաւակներն էլ վայելք չունին նրանում:

Ես ինչո՞ւ քաղաքամ իմ ոսկորները այնտեղ քաղելու, երբ իմ կենդանութեան օրով ինձ համար տեղ չի եղել այնտեղ:

Ես չեմ նանաչում «իմ» հայրենիքի Հիւսիսը եւ Հարաւը: Ես նանաչում եմ միայն մի կեղտոտ անկիւն, որի վրա քափած քրտինքս մի մեծ գետի ջուր կարող էր յորդեցնել: Ես նանաչում եմ միայն մի անիրապոյր վայր, ուր ես քանիւինգ տարի շարունակ քրտինք եմ քափել եւ տանջել:

Ինչո՞ւ սիրեմ այդ հայրենիքը. ի՞նչպէս սիրեմ ես
նրան:

* * *

Երբ ես անգործ էի մնում, «իմ» հայրենիքը ինձ
հա՞ց էր տալիս:

Երբ ես հիւանդանում էի, «իմ» հայրենիքը ինձ
դարմա՞ն էր նամբում:

Երբ իմ փոքրիկը հիւանդութիւնից մեռնում էր,
«իմ» հայրենիքը ուեւէ փորձ անո՞ւմ էր նրան փրկելու:

Երբ սառուցների վրա սրբորբում էի, «իմ» հայ-
րենիքի արեգակը տաքացնո՞ւմ էր ինձ:

Երբ ես սիրում էի, նա տալի՞ս էր ինձ իմ սի-
րածը:

Երբ ես մէկին որոնում էի, որ ինձ սիրէր, սէ՞ր
էր տարածում նա ինձ վրա:

Ինչո՞ւ սիրեմ ես նրան, — այդ դաժան հայրե-
նիքը: Նրա համա՞ր, որ նա ֆեղ սիրում է: Նրա հա-
մա՞ր, որ դու նրան սիրում ես:

Բայց դու ինձ սիրո՞ւմ ես: Ես ֆեղ սիրո՞ւմ եմ:
Մենք կարո՞ղ ենք իրար սիրել: Մենք կարո՞ղ ենք
«մեր» հայրենիքը նոյն կերպով սիրել:

* * *

Դու մնա՞ այդ հայրենիքի մէջ: Դու մնա՞ «իմ»
հայրենիքի մէջ. Վայելի՛ր այդ հայրենիքը:

Դու ապրել ես այնտեղ: Ես միայն ձնւել եմ նրա
մի փոքրիկ, կեղտոտ անկիւնի մէջ, աշխատել եւ տըն-
քացել եմ այնտեղ:

Ես պէտք ունիմ մի ուրիշ հայրենիքի, ուր ես

ապրեմ, ուր իմ զաւակները ծնւին, ուր նրանց զաւակները ծնւին եւ բոլորը *ապրին*:

Դու մնա՛ այդ հայրենիքի մէջ: Ես պիտի զնամ ինձ համար ՆՈՐ ՀԱՅՐԵՆԻՔ որոնելու:

Քո հայրենիքի սահմանների վրա ինձ պէս բիւրաւորներ, միլիօնաւորներ կան, որոնք նոյնայէս ծնւած են մի տեղ, բայց հայրենիք շունին: Նրանք սպասում են ինձ: Նրանք էլ ՆՈՐ ՀԱՅՐԵՆԻՔ որոնելու են գնում:

Դու սիրի՛ր ՔՈ հայրենիքը: Քո ինչքերին պահապան կանգնած շունը քող սիրի ՔՈ հայրենիքը: Դու ամեն բախտաւորութիւն ունիս այդ հայրենիքում: Քո շունը ամեն վայելք ունի այնտեղ:

Ես ինչո՞ւ պիտի մնամ այնտեղ: Ես ինչո՞ւ պիտի սիրեմ նրան:

Դու եւ քեզնամանները մնացէ՛ք ձեր հայրենիքում եւ վայելեցէ՛ք:

Ես ինձնամանների հետ ՆՈՐ ՀԱՅՐԵՆԻՔ որոնելու եմ գնում:

ՔՈ ԱՐՁԱՆՆԵՐԸ ԵՒ ԻՄ ԱՐՁԱՆՆԵՐԸ

Դու սիրում ես գեղեցիկ արձանները:

Ես էլ սիրում եմ նրանց:

Քո արձանները գեղեցկուրիւնն են պատկերացը-նում. նրանք հերոսուրիւնն են մարմնաւորում: Նրանք ցուցադրում են մարդկային առաջինուրիւնը, բարուրիւնը, իմացականուրիւնը, հանճարը: Նրանք մարմարում են սփանչելին, վեհը եւ գերերկրայինը:

Այդ բոլորը ես էլ եմ սիրում:

Բայց դրանից իմ արձանները չեն: Նո ուրիշ արձաններ աւելի եմ սիրում:

Իմ արձանները եւս գեղեցիկ են. բայց նրանք գեղեցկուրիւնը չեն արտայայտում:

Իմ արձանները տգիտուրիւնն են պատկերացնում: Նրանք ներկայացնում են մարդկային հոգու ապականուրիւնները, — չարուրիւնը, նախանձը, ժենը, եսականուրիւնը, ցոփուրիւնը, անարդարուրիւնը, ատելուրիւնը:

Իմ արձաններն էլ յանախ հանճարներին են պատկերացնում, բայց ոչ ստեղծագործող հանճարներին. այլ նրանց որ քանդում են, աւերում են, ապականում, անքարոյացնում եւ ոչնչացնում են:

Իմ արձանները արտայայտում են ոչ թէ մարդկանց հրեշտակային յատկութիւնները, այլ նրանց դիւային կարողութիւնները :

* * *

Ահա՛, տե՛ս, այս մէկն է իմ արձաններից : Խոշոր է, քրօնզից շինւած, հաստատում եւ անեղծանելի :

Դա, — իմ այդ արձանը, — պատկերացնում է գերմանական այն կուսակին, որ սորանից վեց տարի առաջ յաշս մէկ միլիոն չարդւած հայ կանանց, մանուկների, ծերերի եւ երիտասարդների, բացազանչում էր՝ «Պետական անհրաժեշտութիւն է այդ» :

Ես ուզում եմ, որ գերմանական կուսի այդ արձանը կանգնեցի Հայաստանի սրտի մէջ :

* * *

Ահա՛, մի ուրիշը իմ արձաններից :

Դա քանդակւած մարմարով ներկայացնում է ֆրանսիական այն հրապարակագրին, որ քան միլիոն սոված ոռւս գիւղացիների սրտակեղեգ աղաղակները լսելով, գրում էր իր քերրի մէջ՝ «Պիտի քողնել, որ բոլորը սովորման լինեն» :

Այս արձանը ես ուզում եմ, որ Ռուսաստանի սրտի վրա բարձրացնի, նիշտ կրեմլինի մէջ :

* * *

Տե՛ս, սա ալ երրորդն է իմ արձաններից : Գրանիուից է շինւած դա: Շատ դէմքեր են պատկերացւած այդ արձանի վրա: Դրանց շարքումն են այն բոլոր գօրավարները եւ սպանները, որոնք հրամայում էին իրենց զինւորներին թէ՝ «Գերիներ մի՛ վերցնե՛ք. բոլորին զնդակահարեցէ՛ք» :

Ես ուզում եմ, որ այս արձանից մի երկրորդը

եւս շինուի: Դրանցից մէկը պիտի կանգնեցնել Հառ-
զում եւ միւսը՝ Ժբնելի մէջ:

* * *

Ահա՝ այսպէս են իմ արձանները:

Նրանք պատկերացնում են միայն մարդ-զազան-
ներին եւ մարդ-զազանութիւնները:

Ես սիրում եմ իմ այս արձանները, ինչպէս եւ
սիրում եմ քո արձանները:

Բայց ես քո արձանների մօտ միայն այցելուրեան
եմ զալիս:

Իմ արձանների մօտ ես ուխտի եմ զնում:

Դու եւ ես սիրում ենք քո արձանների զեղեցկու-
թինը եւ ո՞չ այն զեղեցկութիւնը, որ նրանք են պատ-
կերացնում:

Ես սիրում եմ իմ արձանների զեղեցկութիւնը եւ
տտում եմ այն տգեղուրթիւնները, որ զեղեցկօրէն ներ-
կայացնում են նրանք:

Ես ատում եմ այն արձանագործներին, որ լաւը
տեսնում եւ չեն պատկերացնում:

Ես էլ աւելի ատում եմ այն արձանագործներին,
որ լաւը տեսնում, եւ վատն են պատկերացնում:

Բայց ես հազար անգամ աւելի եմ ատում այն զե-
ղագէտներին, որ վատը տեսնում, եւ լաւն են պատ-
կերացնում:

Արձանագործներ կան, որ սէր են սովորեցնում
տեղուրթիւնը յաւիտենականացնելու համար:

Այդպէս են քո արձանագործները:

Արձանագործներ կան, սակայն, որ տեղուրթիւն
են ուսուցանում՝ սէրը հաստատելու համար:

Այդպէս են իմ արձանագործները:

* * *

Ես սիրում եմ քո արձանները, բայց ատում եմ
քո արձանագործներին:

Ես ատում եմ իմ արձանների մէջ զեղեցկօրէն
պատկերացւած տղեղութիւնները եւ վատութիւնները.
բայց սիրում իմ արձանագործներին:

Մինչեւ որ զեղագէտները վատութիւնը չպատկե-
րացնեն, վատութեանը արձաններ չկանգնեն, վատը չի
իդէալականանալ:

Մինչեւ որ վատը չիդէալականանայ, վատութիւն-
ները չեն անհետանալ:

Քո արձանագործները մինչեւ այժմ մարմարին եւ
բրոնզին զգացնել են տւել լաւութիւնը, բարութիւնը,
վեհութիւնը, առաքինին:

Նայի՛ր իմ արձանագործներին, տե՛ս նրանք ինչ-
պէ՛ս մարմարին եւ բրոնզին զգացնել են տալիս վա-
տութիւնն ու չարութիւնը:

Քանդի՛ր քո արձանները, որ զեղեցկութիւնը եւ
տառաքինութիւններն են պատկերացնում:

Շինի՛ր իմինիս պէս արձաններ, որ տղեղութիւնը
եւ մոլութիւններն են մարմարցնում:

Քո արձանների մօտ ես այցելութեան եմ գալիս
միայն. նայում եմ եւ անցնում:

Խմինիս պէս արձանների մօտ ես ուխտի կզամ
մշտապէս: Եւ ատող ուխտաւորներ կրերեմ ինձ հետ:
Երէ մայրեր լինին նրանք, կուխտեն այդպիսի գա-
ռակներ չծնիլ: Երէ հայրեր՝ չնանաչել նրանց:

* * *

Բայց ես մի ուրիշ արձան եւս ունիմ, որ դու չես
տեսել: Ես էլ չեմ տեսած նրան: Դա դեռ չէ շին-

ւած· բայց կերտուում է հետզիետէ: Այն արձանագործը, որ աւարտական ճեւը պիտի տայ այդ արձանին, դեռ չէ ստեղծւած: Նա ստեղծւում է կամաց-կամաց, որ աւուր:

Խուալական ցեղի, բնութեան, երկնքի եւ երկրք բոլոր կարողութիւնները միացան, համարուեցին իրենց ամրողջ խորութեամբ եւ ընդարձակութեամբ, ու ստեղծեցին Միքէլ Անջելօին:

Դեռ չի ծնւած այն ցեղը որ կարողանար ծնել ԻՄ Միքէլ Անջելօին: Դեռ չի բացւել այն երկինքը, որ կարողանար հովանաւորել նրա մեծութիւնը:

Երբ բոլոր ազգերն ու ցեղերը իրենց արիւններով եւ կարողութիւններով իրար միանան.

Երբ բոլոր մարդկային գարմերի հանճարները իրար համարուին.

Երբ Հարաւի պտղարեր ջերմութիւնը խառնի Հիւսիսի կազդուրիչ պաղութեան հետ.

Երբ հիւսիսային սառուցների ցոլքերը քարախուին հարաւային ծիածանի խայտուն գոյների մէջ.

Երբ Արեւելքի նոխութիւնը եւ փարքամութիւնը սահմանաւորւի Արեւմուտքի չափովն ու տէնութեամբ, այն ժամանակ պիտի ծնւի Համամարդկային Արձանագործը, որ ոչ Խուալացի պիտի լինի, ոչ Սպանացի, այլ՝ ՄԱՐԴ:

Այն ժամանակ պիտի կերտուի նաեւ իմ այդ մեծ արձանը: Պիտի ստեղծւի նա:

Նորածին եւ նորաստեղծ Միքէլ Անջելօն, — ԻՄ Անջելօն, — մի հսկայական մուրնով պիտի փշրէ այն ժամանակ, ԻՄ իսկ հրամանով, ԻՄ բոլոր արձանները, որ նաեւ քոնն էին դարձած: Այդ բոլոր Փշրւածքները իրար պիտի խառնի նա եւ դարձնի մի հրահե-

դուկ նիւր : Այդ նոր գանգւածից նա պիտի կերտէ ՆՈՐ ԱՐՁԱՆՅ :

Այն ժամանակ չպիտի լինի այլեւս գերմանական կուսա, կամ ֆրանսիական հրապարակագիր, ո՞չ էլ զօրավար կամ զինւոր : Այն ժամանակ պիտի լինի Միայն՝ ՄԱՐԴ :

Նոր արձանագործը պիտի ստեղծագործի ըստ իւր ոյտակերի : Մարդ-Արձանագործը պիտի արարչագործի Մարդ-Արձանը :

Այդ նոր արձանը պիտի կանգնեցւի իմ բոլոր արձանների վրա : Դա պիտի լինի արձանների արձանը :

* * *

Եւ նորածին, գեղագէտ հսկան, անցեղ, աներկիր եւ անազգ Միքել Անջելոն, բրոնզախառն մարմարի վրա պողպատակապ շերտերով պիտի փորագրի անջնջելի խօսքները .—

«ԱՅՍ ԿԵՐՏԻԱՆԻ ՄԵԶ ՀԱԼԻԱՆ ԵՒ ՈՉՆՉԱՑԱՆ ԵՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԲՈԼՈՐ ԶԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՏԳ-ԱՌՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՈՒ ԲՈԼՈՐ ՈՉ-ՄԱՐԴԻԿ» :

Այն ժամանակ քո արձանագործները կրկին յարութիւն պիտի առնեն . քո արձանները պիտի դառնան նաեւ իմ արձանները :

Այն ժամանակ միայն ես ուխտի կզամ նաեւ քո արձանների մօտ :

Եւ առաջին անգամը լինելով՝ արձանների մօտ ես ուխտի կերպամ սիրելու համար, եւ ոչ տանելու :

Նոր ուխտաւորներ էլ կրերեմ, անքի՛ւ, անհաշի՛ւ : Նրանիք էլ կզամ սիրելու :

Ատելութիւնը այլեւս մեռած կլինի բոլորի մէջ :

III

ԽԵՂՃՈՒԹԻՒՆԸ ՇՔԵՂՈՒԹԵԱՆ ՄԷԶ Ե Ի

ԽԵՂՃՈՒԹԵԱՆ ՇՔԵՂՈՒԹԻՒՆԸ

Ես տեսայ լոեգնուքիւնը՝ շքեղուքեան մէջ :

Սրահը մարմարակերտ էր : Սիւները՝ ոսկեկուռ : Պատերը ծանրաբեռնած՝ արեւելեան փարքամուքիւններով :

Յատակը՝ պապդուն : Առաստաղը՝ արծաթափայլ :

Կոյր ծնւածն իսկ այդ շքեղուքիւնը ողողող լոյսի տակ սլիտի զգար, որ խաւարի ուժը խորտակւած է :

Ժպտուն երեսներ կային ամեն անկիւնի մէջ :

Ադամանդազարդ կուրծքեր՝ ամեն սեղանի մօտ :

Հոլանի կանայք, մաքրատաշ երեսներ, կոկւած եւ զարդարուն մազեր :

Հանդերձները խշխշուն էին : Թիւերը՝ բրրուն : Ոտները՝ կաֆաւաշարժ :

Ամեն անկիւնից երջանկուքիւն էր հոսում :

Ամեն սեղանի շուրջ կեանք կար եւ եռանդ . խինդ եւ բրրիու . աչքերի փայլ եւ կրծքերի տափուքիւն .

Շարժում, իրարանցում, նիշ, աղմուկ, բաժակ եւ կենաց :

Բաժնոսը իշխան էր սրահի մէջ :

Ուկին՝ երամայող :

Նիծաղը՝ օրէնք :

Մոռացութիւնը՝ պարտք :

Անզգայութիւնը՝ իրաւունք :

Խորհելլը՝ հեզնանք :

Մետախսէ գորգի վերեւ, փղոսկրեայ շրջանակի
մէջ, ոսկէ սլաքը պտոյտ էր անում անընդհատ .— մէկ,
երկու, չորս,

Եւ աւելի :

Խսկ ուրախութիւնը վերջ չունէր :

Խսկ երջանկութիւնը շարունակում էր :

Բացւում էին նորանոր շիշեր : Փրփրում էին նոր
բաժակներ :

Նոր աղմուկ, նոր իրարանցում :

Ուրախութեան նոր ալիքներ :

Մոռացումի նոր շրջան :

Քրքիջների նոր համազարկ :

* * *

Մեծ քաղաքի մէջ էր :

Գործադուլը վիժել էր :

Չորս ամսւայ յամառ մաքառումից յետոյ գործա-
ւորները տեղի էին տևել :

Ստամբուլը գօրաւոր էր գտնել կամֆից :

Մարմինը ընկնել էր հոգին :

Եւ կորացած զլուխներով, ատամները իրար զար-
կած, շրբունքները կծկելով, բռունցքները սեղմ, գոր-
ծի էին զնացած նրանք, — պարտւած բանւորները :

Արխինը շատերի աչքերը կարմրացրել էր :

Ուրիշները մարդկանց երեսին չէին ուզում նայել .
— չէին կարողանում :

Զգիտէին՝ արդեօֆ իրե՞նիք դադրած են մարդ լի-
նելուց, թէ՞ նրանիք, որոնց դէմքերին պիտի նայէին:

Սոտիպւած էին սակայն, զործի զնալ: Չեռները
պիտի բացւէին, սեղմւած բռունցքով չէր կարելի
զործել

Անիւները շարժւել էին սկսել կրկին: Գործը շա-
րունակում էր:

Խոկ մարմարակերտ սրահի մէջ խրախնանը մօտե-
նում էր իր գագարնակէտին:

Աղբատութեան պարտութիւնն էր, որ տօմուում էր՝
շքեղութեան մէջ:

Ունեւորների յաղքանակը սրահի մէջ էր հաւաքել
յաղքանակող հարուստներին:

Խեղնութիւնն էր, որ քաջաւորում էր այնտեղ՝ շք-
եղութեան մէջ:

Խաւարն էր այդ՝ որ շոայլօրէն ողողւած էր լոյսով:
Ես չէի տեսած աւելի մեծ շքեղութիւն:

Ես չէի տեսած աւելի մեծ խեղնութիւն:

Ես տեսայ խեղնութիւնը շքեղութեան մէջ:

Խեղն մարդիկ. քշաւու մարդիկ. անմարդ մար-
դին: Շքեղութիւնը խեղնօրէն ապրող մարդիկ: Խեղ-
նութիւնը շքեղութեաւոր ծածկող մարդիկ:

* * *

Կրկին շարժում կայ:

Իրարանցում է,

Սրահը փոխւած է փողոցի:

Մքութեան միջից մուխն է բարձրանում:

Անտաշ երեսներ՝ աղօտ լոյսերի տակ. նարպոտ
եւ սեւցած շարիկներ. նիշ, հրմշտկում, զոռում եւ
եւ զոչում. խառնակ աջուձախ, անվերջ աղաղակ:

Հրդեհ է: Գործարանը այրում է:

Զուրը զրկւած է զօրուքիւնից :

Հրաբեր կայծերը քռած էին բորբոքւած սրտի ժուրայից :

Յաղբաւածների հրավառուքիւնն էր :

Հրեղէն լեզւակները շինուածիւնն էին լուսաւորում :

Զորս դին կանգնած էին նրանք .— Խեղները, պարտածները :

«Այդպէ՞ս» .—

Զայնարկում էին հարիւրաւորներ՝ մեքենայօրէն, անզգալարար :

Եւ ամեն անգամ նրանց այնպէս էր երեւում թէ բնցերը աւելի անխնայ կերպով էին նարակում :

«Այդպէ՞ս» . . .

Յաղբանակի խօսք էր՝ պարտածների այրւած սրտերից քռած :

Դործարանը մոխրացաւ :

Նրանք կրկին անզործ էին :

Եւ դեռ չյաղբաւած :

Դործադուլը շարունակուում էր . . .

Զանզը հնչեց մարմարակուռ սրահի կիսարաց դրուից ներս :

Ճնշիւնները խլացան ուրախուքեան եւ մոռացուքեան անդունիներում :

Կրկին զանգահարում :

Իրարանցում՝ մի վայրկեան :

Եւ տպա՝ լուրջիւն, մեռելուքիւն :

* * *

Արեւամտին երկու յաղբանդամ, կարմրաքռուշ ոստիկաններ նզօրի ջլուտ բազուկներից պինդ բռնած՝ տռաջնորդում էին դեպի ինչ որ խուլ անկիւն :

Մոխրացած գործարանի հանրածանօք աշխատաւորն էր նա, — Եզօրը, որին յանալս «փիլիսոփայ» էին անւանում՝ իր երթեմն խոհուն դիտողութիւնների համար :

Նա բայլում էր ոստիկանական վոքրիկ բանտի նամքան՝ իր երկու ուղեկիցների հետ :

Եզօրը միայնակ յետ էր մնացել գործի զնացող անւորներից :

«Ամօ՛ր է, ամօ՛ր եւ նախատինք. Գործի մի՛ զնաք : Մենք պիտի սատկինք բաղցից, բայց գործի չպիտի երանիք : Թող մեր կանայք եւ երախանները բաղցամահ լինին : Մենք չպէտք է երանիք : Ամօ՛ր է»...

Ասել էր նա եւ մնացել :

Բայց բազմուրիւնը ուրիշ կերպ էր մտածել :

Հազարաւոր բաղցած մանուկների եւ կանանց սրբակեղեք նիշերը նրանց նամքել էին կրկին դէպի գործարան :

«Գնացէ՛ք» — գոչել էր Եզօրը արհամարհուտ շեշտով եւ այրւած սրտով. «Ես կմնամ հաստառ : Ես ԿՇԱՐՈՒՆԱԿԵՄ ԳՈՐԾԱԴՈՒԼԵԼ» — սպառնացել էր նա յամառաքար :

Ոչ ոք չէր հասկացել նրա միտքը :

Վառւած գործարանի բոցերի հետ միայն գործաւորներից շատերի զլխում լուսաւորւել էին Եզօրի խօսքերը :

Տեսնողներ են եղել, որ Եզօրը բարիւղի մէջ բարձաւած մի մեծ կապոցով մօսեցել էր գործարանի պահեստներին :

Եւ... գործարանը այրւել էր :

Գործաւորները կրկին անգործ էին :

Անգործ էր կրկին Եզօրը :

Գործադուլը շարունակում էր :

* * *

Եզօրք յաղրւած չէր դեռ . նա նախատինքի չէր արձանացել : — Այսպէս էր մտածում աշխատաւոր-փիլիսոփան :

Նա արգելափակւած էր . բայց ինքն իրեն չէր ընդունում , որ յաղրւած էր :

Երբ երեկոյեան ուշ ժամանակ՝ ոստիկանական բանտի փոքրիկ սենեակի մէջ , աղօտ լոյսի տակ իր գրապանից հանած կեղտոտ թղթի վրա կարդում էր նա կրկին իր սիրած բանաստեղծի խօսքերը , այդ վատահութիւնը նրա մէջ աւելի եւ աւելի էր գօրանում :

«Եսեղնութիւնը երբեմն տարօրինակ շքեղութեամբ պիտի երեւայ :

«Որպէսզի շքեղութեան մէջ ծրարւած թշւառութիւնները զգացւին» :

Այս տողերը հոլովում էին շարունակ «Փիլիսոփայ» եզօրի ուղեղի մէջ :

Եօր տարի առաջ երբ նա այդ տողերը կարդացել էր , չէր կարողացել ըմբռնել նրանց իմաստը :

Բայց նա այսօր հասկանում էր այդ :

Թերեւս նա հասկանում էր ոչ այնպէս , ինչպէս բանաստեղծն էր ուզում հասկացնել :

Ինչ հոգ : Նա համոզած էր , որ բանաստեղծն էլ նիշդ այն է կամեցել , ինչ ինքն էր կամենում :

Եւ բանաստեղծի խօսքերը նրա ուղեղում ամեն անգամ նոր պտոյտ անելուց՝ նա աւելի էր հաւատում , որ ինքը յաղրւած չէ . որ ինքը յանցանք չի գործն , որ ինքը միայն իր պարտքն է կատարել :

Գործադուլը պիտի շարունակւէր ինչ էլ որ լինէր : Հրդեհը տարօրինակ մի շքեղութեամբ պիտի լուսաւորէր խեղնութիւնը , չքաւորութիւնը , պարտւածների դէմքը :

Նրանք մի անգամ էլ իրենց մէջ զօրութիւն պիտի
զգային: Նրանք շպիտի ընդունէին, որ իրենք յաղբ-
ւած են վերջնականօրէն:

Եգօրը շարունակում էր փիլիսոփայել այսպէս:
Խսկ գործարանը չէր բանում այլեւս:
Գործաւորները անգործ էին կրկին:
Այդ՝ խեղճութեան շեղութիւնն էր:
Այդ՝ յաղքանակ էր Եգօրի համար:
Այդ՝ կատարումն էր նրա փիլիսոփայութեան:

IV

ԻՄ ԴԱԻԱՑԱՆՆԵՐԸ ԵՒ ՔՈ ՀԵՐՈՍՆԵՐԸ

Ես սիրում եմ դաւանաներին, — իմ դաւանաներին :

Զարմանալի արարածներ են նրանք :

Այդ ի՞նչ ուժ է, որ նրանց մէջ կայ : Այդ ի՞նչ կամեցողութիւն է, որ ամբարւած է նրանցում : Այդ ի՞նչ անվախութիւն է, որ նրանք ունին . ի՞նչ բարոյական կորով, որ նառազայրում է նրանցից :

Հերքուլէսեան գոյուրիւններ են նրանք, — իմ դաւանանները :

Նրանց թերենով դարերն են խօսում :

Նրանց գործերով մարդկուրիւններ են շինուում եւ փլատակուում :

Նրանց կամֆերով երկիրներ ու երկինքներ իրար են միախառնուում :

Գերմարդկարին ստեղծագործուրիւններ են նրանք, — իմ դաւանանները :

* * *

Զօրդանօ Բրունօն մէկն էր այդ դաւանաններից :

Սավօնարօլան նոյնպիսի մի դաւանան էր :

Գարիբալդին՝ նմանապէս :

Մաճճինին՝ մի ուրիշը :

Դանտօն՝ շատերի վկայութեամբ :

Դաւանաններ էին նոյնալես Կոպերնիկոս և Դալիլէջ :

Զօն Հուսը մի մեծ դաւանան էր :

Սոկրատէս՝ շատ աւելի մեծը :

Տօլսոյը՝ ո՛չ պակաս :

Նիկօլայ Իլիչ Ռուխանովը ամենամեծ դաւանաններից մէկն էր :

Քրիստոս՝ նոյնալես :

Բուդդա՝ առանց կառկածի :

Դաւանան էր նաև Մարքս :

Դաւանան էր նոյն իսկ կանոտ :

Դրանք բոլորը դաւանաններ էին : Ես սիրում եմ այդ դաւանաններին : Ես ուզում եմ, որ այդպիսի դաւանաններ շատանան : Ես կրագայի, որ ինքս մէկը դառնամ այդ դաւանաններից :

* * *

Այլարանութիւնն :

Ամեննեւին :

Ես բառերը գործ եմ ածում իրենց իսկական արձեններով . նիշտ մարդկային լեզվի մէջ ընդհանրացած իրենց իմաստով :

Դաւանանութիւն չէ՞ր Բրունոյի գործը :

Նա անխղճօրէն դաւանանեց կրօնական տիրող հաւատալիքների դէմ : Նա երես դարձրաւ Փիլիսոփայական բնդունած իմաստութիւններից : Նա լինց իր ժամանակայ գիտութեան նակատը :

Եւ ստացաւ իր Արժանի պատիմքը :

Խարոյկի վրա այրւեց ողջ-ողջ, ոչնչացաւ եւ երեք դար վերջը յուշարձանի կերպարանի առած՝ եկաւ կանգ-

նեց նիշտ այն հրապարակի վրա, իր հայրենիքի մէջ, ուր նա ողջակիզել էր, — տիրող քրիստոնէուրեան բոլոր կեղտերը տեսնելուն համար:

Մաճճինի և Գարիքալդի դաւանանեցին այս հայրենիքի դէմ, ուր որ նրանք ծնւել էին: Զանացին ուրիշ աւելի մեծ հայրենիք ունենալ: Նրանք դաւանանեցին տիրող կարգերի դէմ. Ի՞մ Ակնութիւնի Եկ ՕՐԵՆՔԻ Տէ՛ր բռնուրեան դէմ:

Նրանք էլ պատժւեցին:

Նրանց արձանները քարձրացան այնպիսի վայրերի մէջ, ուր իրաւունքի և արդարուրեան դէմ բռնուրիւնը տիրապետող է:

Տօլսոյը դաւանանեց փարիսեցիական քրիստոնէուրեան դէմ: Նա քննադատուրեան առարկայ դարձրաւ եկեղեցին: Նա այպանեց հայրենիքը: Նա նշաւակեց հայրենասիրուրիւնը:

Եւ նա եկեղեցու քանադրանիքին արժանացաւ. հայրենասէրների և քրիստոնեաների անէծքը վաստակեց:

Նիկոլայ Ռուխանովը դաւանանեց բոլոր հայրենիքների դէմ. բոլոր օրէնքների, բոլոր պետուրիւնների դէմ: Լիեց տիրող քարոյականուրեան բոլոր հրամայականները:

Աշխարհի ատելուրիւնը բաժին ընկաւ նրան:

Սոկրատէսը դաւանանեց մարդկային միաւտուրեան եւ անհասկացողուրեան դէմ. պնւանարկեց եկեղեցին եւ եկեղեցականներին: Ստիպւց բոյնի բաժակը դատարկել:

Խմեց եւ անէացաւ:

Կանոր իր գոյուրեամբ՝ մարմնացած մի դաւանանուրիւն էր մարդկային մտքի տկարուրեան դէմ.

տիրող աստւածների դէմ. հրեշտակների եւ սատանաների դէմ :

Նա եւս հալածւեց եւ նախատինեների արժանացաւ :

Մարքսը դաւադրութիւն սարքեց անցած պատմութեան դէմ. աւանդուղ զիտուրթեան դէմ. տիրող իրաւունքի. հաստատւած օրէնքի եւ ընդունւած արդարութեան դէմ :

Այդպէս էլ ուրիշները :

Այդպէս էլ Գալիլեյը, Կովերնիկոսը, Սալօնարօլան :

Այդպէս՝ նաև Դանιոն, Զօն Հուս, Քրիստոս Բուդդա :

Դրանք բոլորն էլ դաւանաններ էին : Դրանց բոլորի մօտ էլ դաւանանական անմերժելի եւ անյաղքահարելի մի կամք գոյութիւն ուներ :

Դրանց բոլորին էլ ես սիրում եմ : Դրանց բոլորի համար էլ անկիւն կայ իմ սրտի մէջ :

* * *

Խոկ քա հերոսները :

Ո՞ւր են նրանք : Խ՞նչ են նրանք :

Ա՛հ, ես սոսում եմ նրանց բոլորին : Պժզում եմ նրանցից :

Դրանք բոլորը հայրենասէրներ էին :

Դրանք բոլորը մեռան կամ ապրեցին իրենց Ժողովրդի համար :

Դրանք բոլորը վազեցին մեծ խղէալների հետեւից :

Դրանք ոչ ոքի չդաւանանցին : Ոչնչի դէմ դաւադրութիւններ չսարքեցին :

Դրանք անհաւատարիմ գտնւեցին միայն . . . «մարդ» զաղափարի դէմ :

Ճերոս էր Դիկօլայ Բ. ցարը : Նա անվախօրէն, կնուտը ձեռքին՝ իր սիրած ժողովրդին հրամայեց մի-եր-

կու տասնամեակ շարունակ : Նա երկար տարիներ մի-
այնակ կռւեց հարիւր ուրսուն միլիօն ժողովրդի դէմ ,
— «Երա համար» :

Տեղի չուաւ երթէֆ : Երբ այդպէս արաւ , ուշ էր :
Հրացանազարկ եղաւ եւ . . . հերոսացաւ :

* * *

Հերոս էր Վիլհելմ Հօհենցոլերնը :

Նա եւս տասնամեակներ շարունակ քաջարար իր
սուրը շողշողացրեց : Զրկւեց իր զահից՝ իր հայրե-
նիքի եւ ժողովրդի «համար» մղած սոսկալի պատե-
րազմի ողբերգական վախճանին :

Նա , — ոն հերոսը , — սպառնալիքներ կարդաց ամ-
բողջ աշխարհին : Կոխ յայտարարեց ամբողջ մարդ-
կուրեան դէմ : Մէկը մնաց միայն աշխարհի մէջ , որի
դէմ նա չկռւեց . — ինչք , իր մեծամոլուրիւնը :

Վերջը զրկւեց ամեն ինչից . կորցրեց փառք , պա-
տիւ , շքեղուրիւն . ախորւեց , արգելափակումի ենքարկ-
ւեց եւ . . . հերոսացաւ :

Նա չի դադրել դեռ զոյուրիւն ունենալուց՝ Փիզի-
ֆապէս : Բայց մեռնում է ամեն օր :

* * *

Հերոս էր Լիւդովիկոս ԺԶ. -ը :

Մինչեւ վերջը դիմադրեց նա դաւանաններին , — իմ
դաւանաններին : Կառափնարան բարձրացաւ եւ . . . հե-
րոսացաւ :

Կօրսիկայի հանճարը եւս ոն հերաներիցն էր :

Նա էլ կոխ յայտարարեց աշխարհին : Նա էլ աշ-
խարհ նւանեց : Նա էլ անվախ էր , յանդուզն , յամառ .
դիմադրող . բոլոր հերոսների առաքինուրիւններով օժ-
տւած մեծապէս :

Նա պայմարեց մինչեւ վերջը : Կուեց նոյնիսկ մահանից յետոյ :

Նա մեծացրաւ Ֆրանսիան, եւ փոքրացրաւ Գրանսիացուն : Ախորւեց, ինչ իրեն կերաւ՝ ներքնապէս՝ միայնութեան մէջ . մեռաւ եւ կրկին . . . հերոսացաւ :

Քիսմարկը եւս քո հերոսն էր : Նա իր ժողովրդին իր մահանից յետոյ բողեց որպէս ժառանգութիւն՝ Վերսայի Դաշնագրութիւնը :

Նա միացրաւ, ընդարձակեց եւ մեծացրաւ Գերմանիան : Բայց փոքրացրաւ իր հայրենիքը եւ իր հայրենակիցներին . նա քածան-քածան արեց նրանց :

Նա եւս հերոսացողներիցն էր :

* * *

Ես ատում եմ այդ հերոսներին : Ես խորշում եմ այդ մեծ հերոսներից : Ես սոսկում եմ այդպիսի հերոսութիւններից :

Պահի՛ր քեզ համար քո՝ հերոսներին :

Ես սիրում եմ իմ դաւանաններին :

Լիրկնելու մի դաւանան էր :

Նա ռաւանանորէն փոքրացրաւ Գերմանիան, որպէսզի մեծացնի գերմանացուն :

Նա դասալիք էր : Նա քարոզեց որ իր հայրենակիցները զէնքերը ձգեն եւ չկուին : Նա վախկու էր : Նա փոքրոզի էր : Նա չէր ուզում որ կէս միլիօն զերմանացիներ աւելի մեռնին իրենց «հայրենիքի» համար . իրենց կայսեր համար . իրենց փառքի, իրենց յաղքանակի համար :

Կոիւր շարունակւեց, սակայն : Քո հերոսները կը-ոիւր շարունակեցին : Նրանցից շատերը ընկան : Ուրիշներն էլ վերադարձան :

իմ դաւանաններին հետեւողներից շատերը մեռան :
Ամանք էլ կենդանի մնացին :

Ես առում եմ քա ապրող հերոսներին : Սարսուռով
եւ առանց յարգանքի ես անցնում եմ քա մեռած հերոս-
ների զերեզմանների մօսով :

Ես յարգում եմ իմ մեռած դաւանաններին : Հիաց-
մունքով եւ հպարտօրէն ես դիմաւորում եմ ապրողներին :

Քա հերոսները հերոսացան . . . Ինչի՞ համար :

Եմ դաւանանները դաւանանեցին . . . Ինչի՞ դէմ

V

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՅՈՅՍԵՐ

ԿԱՐՄԻՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ Ի ՏԵՍ

Ահա՛, եկել եմ ես կրկին:
 Քրտնաքարախ եմ եւ յոզնած.
 Եւ՝ դեռ կենդանի:
 Մարտուի եւ լքումի վայրկեաններ ասպեցի:
 Ցաղքանակներ տարի եւ ոգեւորութեան օրեր ու-
 նեցայ:

Փնտուեցի ամենուրեք, որոնեցի անվերջ, խարխա-
 փեցի մը-ուրիւնների մէջ անդադար.

Սակայն որոնածս չգտայ:

Եւ ահա՛, վերադարձել եմ կրկին, —

Հի՞ն յոյսերս՝ ջարդւած.

Հի՞ն երազներս՝ անզոյ:

Բայց դեռ յոյսեր ունիմ եւ երազներ:

Նրանց քեւերովն է, որ եկել եմ ես կրկին.

Նրանց համար է, որ ապրում եմ դեռ:

Եկե՛լ եմ . . .

* * *

Զդումի համար եմ եկել.

Երդումի համար եմ եկել.

Ուխտելու եմ եկել.

Քեզ համար եմ եկել, —

Ո՞վ Դու իմ Ծնողը, մեր բոլորի Ծնողը, իմ ծնող-ների Ծնողը :

Այդ ի՞նչ իրաշք է, որ կատարւել է քո մէջ :

Այդ ի՞նչ իրաշք է, որ կատարում ես դու իմ մէջ :

Երեկ գէպի ապրերն էիր կանչում դու քո զաւակ-ներին .

Այսօր դաշտերն ես իշեցրել նրանց :

Դու առաջ նրանց արխնն էիր որահանցում .

Հիմա քրտինք ես սպասում նրանցից :

Պշնչացնող սուրերը բահերով են փոխարինել քո զաւակները . իսկ դու չես բարկանում այլիւս :

Այդ որչո՞փ փոխւել ես դու :

Այս որչո՞փ փոխւել են քո զաւակները : Որչո՞փ փոխւել եմ Հո՞ մէկը քո զաւակներից :

Ինձ կանչեցիր դու արիւն թափելու .

Գնացի ու թափեցի' ...

Ինձ կանչում ես հիմա քրտինք ստպու համար .

Եւ եկել եմ, ահա' .

Եկե՛լ եմ . . .

* * *

Եօրը տարի առաջ էր, երբ դու ինձ կանչեցիր :

Ես լսեցի քո ճայնը : Տանջանիք հեւում էր նրա մէջ - բայց յոյսի շեշտերը մարած չէին դեռ :

Ես նիրհած էի, երբ քո սրտիեցուցիչ զոշը իմ ականջին հասաւ :

Ես լսեցի այն. սակայն չիմացայ թէ ո՞ւր ես դու. *որտեղից* է զալիս քա ձայնը. դեսի ո՞ւր է կանչում նա ինձ :

Ինձ բւում էր, որ դու ինձ դեսի պարտականութեան դաշտու ես կանչում :

Ես կարծում էի թէ դու հրամայում ես ինձ դուրս ելնել եւ ժեզից հեռո՞ւ, օտար երկնակամարների տակ ժեզ համար մեռնել :

Ես շփորւած էի. ես մոլորւած էի : Ես չէի խմանում թէ ինչ անեմ :

Ես տեսայ որ անհատնում բազմութիւններ վազում են դեսի հեռուները : Նրանց հրագենները իմ աչքերին զարնեցին : Նրանց աղաղակները ինձ ոգեւորեցին :

Ես տեսայ թէ ինչպէս մատղաշ աղջիկները գուրգուրանենով եւ հիացմամբ վարդի փունջեր էին մեկնում դեսի ռադմադաշտերը շտապող մարտիկներին :

Նորահարսները զերմ, այրող համբոյրներ էին դրոշմում իրենց ամուսինների շրբունքներին :

Քոյրերը զրկախառնում էին եղբայրների հետ :

Խոկ ծերերը օրինում էին զնացողների նամքան :

Արցունեներ կային շատերի աչքերում : Բայց արցունեների թիւրեղների միջից, ասես առաւօտեան ցողի վրա, յոյսերի շողերն էին ցոլում՝ զարնան արեգի պէս :

Գնացողները յոյսերով էին զնում :

Մնացողները գարձի եւ յաղթանակի էին սպասում :

Ռազմերգի զզլիսիչ հնչիւնների տակ բոլորը յուսառատ եւ խանդախառ՝ դիմում էին դեսի հեռո՞ւն, դեսի անհասկանալի՞ն, դեսի անորո՞շը . . .

Ես քոյր չունեի :

Ոչ խոկ հայր կամ մայր :

Բայց քա ձայնը զօրաւոր շեշտով արձագանգում էր

դեռ իմ ականջներում։ Քո զոչը գերիվեր էր հանում իմ հոգին, — ո՞վ իմ Մեծ Ծնողը, իմ հօրը եւ մօրը Ծնողը։

Քո զաւակների բազմութիւնը շարժւել էր արդէն։ Ես էլ հետեւեցի բազմութեան……

* * *

Օք մշուշապատ էր։

Անտառը, ուր հասայ ուշացած, վայրի էր եւ քալ մացառներով խնողւած։ Մացառների միջից հազարաւորների արահետներն էին երեւում։ Տասնեակ հազարաւորներ, — եւ դեռ աւելի, — շարան-շարան անցնում էին այդ արահետներով՝ երթեմն լուր եւ խորհրդաւոր։ Երթեմն աղաղակով եւ անհանգիստ։

Ես էլ միացայ նրանց։

Դժբախտութեան, փորձանելների մէջ էիր դու, — ո՞վ իմ ՆՈՐ Ծնողը։

Նրանից շտապում էին քեզ համար։

Ես էլ քեզ համար զնացի։

* * *

Ա՛հ, ինչ օրեր էին, որ այնուհետեւ բաժին ընկան ինձ։

Ժամանակներ եղան, երբ արիւնը երակներիս մէջ դադրեց հոսելուց։ Վայրկեաններ ապրեցի, երբ ասես սիրոս կանգ առաւ կատարելապէս, իսկ զանկս ուզեց փլչել եւ իր միջից ուղեղս դուրս ժայր-քել։

Ես տեսայ իմ զինակցի զլուխը պոկւելիս իր մարմնից այն պահուն, երբ նա իր սիրուհու պատկերը կարուով շրբունեներին սեղմած՝ տաք համբոյրներ էր դրոշմում նրա վրա։

Ես քրոնեցի իմ եղբայրը դիակների կոյտի մէջ վի-

բաւոր, քաղցած եւ ծարաւի ու վազեցի դեպի առաջ՝ թշնամու դէմ իմ «պարտիս» կատարելու համար։ Եւ երբ նոյն նամբայով վերադարձայ, եղբայրս արնաբամ գտայ իր տեղին վրա։

Ես հրացանիս փռդը դարձրի դեպի ինձ եկող զինուրը եւ երբ զնդակը մնխել էի նրա կուրծքը ու նա քաւալում էր արեան նապաղիկների մէջ, իմացայ, որ իմ բախտակիցն է եղել։ Նրա հետ ուրը տարի շարունակ բազուկներ էի մաշել միեւնոյն աշխատանոցի մէջ։ Երկու անգամ բախտային խուցը կիսել էի իր հետ։ Նա եկել էր իմ միւս արինակցիս համար ջուր տանելու, որ մահամերձ էր եւ ծարաւից պապակում էր թշնամու խրամատի մէջ։

Ես այս բոլորը գործեցի, այս բոլորը կրեցի քեզ համար, բն վառքի համար, բն ապագայի համար։

Դու կանչել էիր ինձ։ Եւ ես կարծում էի, թէ բն կամքն իմ կատարում։

* * *

Բայց ահա՛, տեսնում եմ, որ մոլորւել եմ ես։ Ինձ շփորել են։

Քո ձայնը չէ, որ ես լսել եմ եօրը տարի առաջ։ Քո զոչը չէ, որ իմ ականջին է հասել։

Քո տեսնով չար հոգիներն են խօսել ինձ հետ։

Քո ձայնով դեւերն են կանչել ինձ։

Ո՞ւշ հասկացի այդ բայց հասկացի, որ մոլորած եմ։

Հեռակ ես տեսայ լոյսը, — կարմիր, շողշողուն, պայծառ լոյսը, — որ վառողի ծուխով եւ դիակներից բարձրացող գոլորշիներով ծածկւել էր իմ աշխերից։ Հայեացիս յառեցի այդ լոյսին։ Քայլերս ուղղեցի դեպի նա։

Եւ ահա՛, եկել, հասել եմ քեզ:
 Եկել եմ զղալու. եկել եմ քեզ նոր ուխտ տալու:
 Քեզ ծառայելու եմ եկել: Քեզ համար աշխատելու
 եմ եկել: Քեզ պաշտպանելու եմ եկել:
 Երէ պէտք չինի, իմ արիմը պիտի սրսկեմ քեզ
 վրա՝ *քեզ Համար:*
 Երէ պէտք չինի, ես քրտինք պիտ քափեմ, մաք-
 րեմ արեան գոյնը բն դէմքից եւ սպիտակացնեմ քեզ:
 Եկել եմ՝ հիմայած բն աշքերի բոցերից. յափշ-
 տակւած՝ բն դէմքի կարմիր փայլից:
 Վերադարձել եմ կրկին, —
 Հին յոյսերս ջարդւած,
 Հին երազներս՝ անզոյ:
 Բայց ՆՈՐ յոյսերով լեցուն. եւ ՆՈՐ երազներով
 խանդավառ:

Եկե՛լ եմ կրկին, —
 Դո՞ւ իմ Մեծ Ծնող.
 Դո՞ւ իմ Նոր Ծնող:
 Ուրիշների համար զնացի եւ կուեցի.
 Քեզ համար աշխատելու եմ եկել:

VI

ՔՈ ԱՐՑՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ՆՐԱ ԱՐՑՈՒՆՔՆԵՐԸ

Չեզ երկուսիդ ես յանախ արտասւելիս եմ տեսնում:

Երկուսիդ սրտերն էլ փափուկ են: Երկուսդ էլ զգայուն ջղեր ունիք:

Երբ դժբախտուրեան ալիքները հայում են ծեր սրտերին կամ ջղերին, նրանք սկսում են դողդողալ, ցնցւիլ, նշալ լալազին:

Ես տեսնում եմ թէ ինչպէս արցունիքի խոշոր կարիները մեծ. քափանցիկ յուլունիքների նման շարանշարան, շիրշիր զլորւում են դեպի ներքեւ՝ եւ քո այտերի վրայով:

Դու հեկեկում ես: Դու ախ ու վիշ ես բաշում: Դու ուզում ես խօսել, քպաւել, նշալ. քայց քո կոկորդը սեղմուում է, քո ձայնը խզուում, քո լեզուն կարկամում:

Քո արցունիքները աւելի եւ աւելի են քափուում: Յուլունիքները աւելի եւ աւելի արագուրեամբ են շարտում: Վերջը ես տեսնում եմ միայն մի երկար, քափանցիկ զիծ քո դեմքի վրա՝ արցունիքի անշատ յուլունիքների փոխան:

* * *

Այդպէս լինում է եեզ հետ ամեն անզամ, երբ եեզ մի մեծ դժբախտուրին է պատահում. երբ քո սիրե-

լիներից մէկը մեսնում է. երբ ք սէրը զարնում է ապառածին եւ խորտակում. երբ ք սիրելին որ ուրիշին է սիրում, ապրում է դեռ. երբ դու չես կարդանում օգնել նրան, որին ահաելի դժբախտութիւն է հասել, եւ որին օգնել ես ուզում:

Այդպէս պատահում է նաեւ Նրա հետ, — ք ընկերոջը :

Դժբախտութիւնը նրան էլ է դառնացնում: Մեծ դժբախտութիւնները նրան էլ մեծ վշտեր են քերում: Նա էլ այդ դժբախտութիւնների ժամանակ արտաւում է, արցունիքներ է ժամում:

Բայց նրա արցունիքները տարրեր են ք արցունիքներից :

Ամեն ո՛ք տեսնում է ք արցունիքները :

Նրա արցունիքները ոչ ո՛ք չի տեսնում :

Ք արցունիքները զգացնել են տալիս ամեն մէկին: Նրա արցունիքները հասկանում են միայն քչերը :

Երբ նա արտաւում է, նրա այտերը չոր են. դառն աղաքի քափանցիկ կարիլները ոչ ո՛ք չի տեսնում նրա դէմքի վրա :

Նրա աշքերը չեն կարմրում: Նրա կոկորդը չի սեղմում: Նա չի ուզում նշալ. նա չի ուզում խօսել. նա չի ուզում հաղորդւել ուրիշի հետ:

Նա համբ է մնում՝ խորը վշտի պէս:

Լուր՝ առաքինութեան չափ :

Սիրունութեան չափ խուսափող :

Մեծութեան չափ անշարժ :

Վեհաճնութեան նման անհաղորդ :

Նա աշքերով չի արտաւում: ՆԱ ԱՐՏԱՍԻՈՒՄ է ՄՐՏՅԱ:

Նա քափում է չոր արցունիքներ :

Քո սեղմած կոկորդից դուրս ելած նիչը ամեն ոք կարող է լսել :

Նրա սրտից բղխած աղաղակը խեղդւում է իր կրծքի լոռունկ անդունդների մէջ :

Նրա արցունիքների վառած բիւրեղները քափւում են իր սրտի փափկահիւս յատակի վրա . նրանք **այրում**, լափում են այդ փափուկ սրտի ամրող շէնքը :

Այդ արցունիքները հալեցնում են նրա եղին :

Քո արցունիքները քունալից են :

Նրա արցունիքները՝ այրող :

Քո արցունիքները ամրողովին քոյնից են շինած . նրանց հիւրը օձերի ատամներիցն է քամւած : Նրանք սպանում են ուրիշներին :

Բայց նրանք քաղաք են քո եղու համար :

Երբ դու արտաւում ես, քոյնը դուրս է մրգւում քո մարմնից :

Դու հանգստանում ես : Դու առողջանում ես : Քո զղերը հանդարտում են : Քո սիրտը անդորրութիւն է զգում :

Ուրիշ են նրա արցունիքները :

Երբ նա արտաւում է, նրա արցունիքները վառած բոցերի պէս տարածւում են իր եղու մէջ, հազարաւոր լեզւակներով նարակում, տոշորում, ոչնչացնում են նրա ամրող զոյուրթիւնը :

Նրանք սպանում են, անէացնում են նրան :

Քո արցունիքները մեզ հանգստացնում են, կազդուրում են, որպէսզի ուրիշները անհանգիստ դառնան :

Նրա արցունիքները սպանում են իրեն, որպէսզի ուրիշները չնեղւին :

Դու ոք աչքերով ես արտաւում, մի անգամ միայն պիտի մեռնիս :

Նա որ սրտով է արտասւում, շատ անգամներ մեռել է մինչեւ հիմա:

Քո սիրտը շատ մեծ է քո արցունիքների համար: Եւ դու արտասւում ես աչքերով:

Նրա աչքերը շատ փոքր են իր արցունիքների համար: Եւ նա արտասւում է սրտով:

Մի մխիթարուրիւն կայ միայն նրա համար:

Նրա արցունիքները ոչ ոքին են քունաւորում: Միայն ինքն է, որ այրում, մոխրանում է իր արցունիքներով:

Արցունիքներ կան, որ քոյն ունին, բայց չեն սպանում:

Արցունիքներ կան, որ քոյն չունին, եւ սպանում են:

Աղի արցունիքներից աւելի սարսափելի են չոր արցունիքները:

Հոսող յուլունիքներից շատ վառած մարզարիտներն են, որ հետքեր են քողնում:

Կրակ կայ, որ քոյն է ոչնչացնում:

Թոյն էլ կայ, որ կրակ է մարում:

Քո քո՞յնն է, որ պիտի մարէ նրա արցունիքների հրդեհը:

Թէ՞ նրա կրակն է, որ պիտի ոչնչացնէ քո քունալից արցունիքները . . . :

VII

ԵՍ ԵՒ ԴՈՒ

Ամեն օր, վաղ՝ առաւօտեան, երբ գիշերային լոռու-
րիւնը նոր-նոր խանգարւել է սկսում քոչունների եր-
գերով, իսկ խաւարը դեռ շարունակում է իր յուսա-
հատական պայֆարը լոյսի դէմ, ևս ժայլում եմ նոյն
նամբան անշեղ կերպով, որ դէպի ժեզ է բերում:

Ես գալիս եմ ժեզ մօս զործելու:

Ես զործաւոր եմ:

Դու զործատէր ես. պիտի զնես ինձնից:

Ես ոչինչ չունեմ, իմ ձեռներից դուրս: Բայց
պարտաւոր եմ շուկայ դուրս զալ՝ վաճառքի համար:

Դու ամեն ինչ ունիս. միայն՝ ոչ ձեռներ:

Եւ շարունակում ես դու դեռ զնել:

Ես, զործաւորս՝ ծախող եմ: Դու, զործատէրդ՝
զնող:

Գիտե՞ս ես ժեզ ի՞նչ եմ ծախում: Գիտե՞ս դու
ինձնից ի՞նչ ես զնում:

Դու առնում ես ինձնից իմ կինը, իմ գաւակները,
իմ սէրը, իմ հոգին, իմ միտքը, իմ կեանքը: Դու
առնում ես իմ ամբողջ էութիւնը, ամբողջ ժարդը, որ
իմ մէջ կայ:

Դրանք բոլորը դու զնում ես ինձնից, բայց չես
պահում ժեզ համար:

Դու դրանք առնում ես ոսկիով։ Եւ կրկին՝ ոսկու համար։

Ի՞նչ է իմ կինը այդ մետաղի հանդեպ։ Նա արձանի չէ նոյն խոկ քո կնոջը աղախինը լինելու։ Դաւունիս աւելի գեղեցիկը, նուրբը, չժնաղը։ Դու կարող ես ունենալ ել աւելի սփանչելին։

Քեզ ի՞նչ հոգ իմ զաւակները։ Դու իմ զաւակներից շա՞տ լաւ զաւակներ կարող ես ունենալ։ Դու իմ զաւակներից շա՞տ աւելի զաւակներ ունիս։ Դու կարող ես ունենալ անքի՛ւ զաւակներ։ պահել, կրել, կերակրել նրանց։

Քեզ ի՞նչպէս կարող է զրաւել իմ սէրը։ Դու աւելի՛ կարող ես սիրել։ Դու կարող ես սէրեր սփռել քորս կողմը։ Դու կարող ես քո սէրերով երջանկացնել շատերի՛ն, շատերի՛ն։

Ի՞նչ է իմ հոգին քեզ համար։ Նա այնքա՞ն աղօտ է, այնքա՞ն աղքատ եւ սահմանափակ։ Նա պարտում է միայն իմ ստամոքսի շուրջը։ Նա ժամանակ չունի սլամալու, երազելու, պրապտելու, բափանցելու։

Քո հոգին ազա՞տ է, անկաշկանդ՝ սաւառնելու, ուր որ կամբենայ. կամբենալու, ուր որ կարելի է սաւառնել։ Նա կարող է թեւակոխել քարծունելու, սուզել բոլոր խորուրիւնների մէջ. եւ երբէ՛ք չիջնել իմ հոգու ցածուրեանը մակարդակին։

* * *

Իմ մի՛տքը։

Իմ կրօ՞նը։

Որքա՞ն անարժէք են դրանք քեզ համար։ Ի՞նչ սինի անես դու այդ ոչնչուրիւնները։

Քո միտքը աւելի կիրք է, ընդարձակ եւ բազմ-

հմուտ։ Թու կրօնը աւելի շքեղ է, փայլուն եւ խռոս-
մնալից։

Խոկ իմ կեսանիքը։ Խ՞նչ կայ նրա մէջ, որ կարո-
ղանար զրաւել ֆեզ։ Խ՞նչ պէտք ունիս-դու նրան։

Դու առնում ես, այս՝ այդ բոլորը ինձնից։ Բայց
դու չես պահում դրանց ֆեզ համար։

Դու զնում ես իմ սէրը՝ դէպի իմ կինը։ Բայց
դու չես խրացնում այդ սէրը։ Դու զնում ես իմ կինը
ինձնից, բայց ֆեզ համար չես պահում։ Իմ զաւակ-
ները դու փոխանակում ես դրամով։ Իմ միտքը կապ-
ւած ես պահում ոսկիով։ բանարկում ես իմ հոգին,
կաշկանդում ես իմ կրօնը, խրում ես իմ ձեռքից իմ
կեսնիքը, կողպէք ես դնում մարդկային իմ իղձերի,
տենչանիքների վրա։ Բայց ոչինչ, ոչինչ չես պահում
դրանցից ֆեզ համար։

Դու զնում ես, յափշտակում ես դրանք բոլորը ինձ-
նից, որովհետեւ դրանք բոլորը իմ անբաժան մասերն
են կազմում։

Դու պարտաւոր ես ինձ զնել։

Դու պարտաւոր ես ինձ հետ զնել նաեւ իմ կինը,
իմ զաւակները, իմ միտքը, իմ կեսնիքը, իմ կրօնը։

Դրանք բոլորը ես ինձ հետ քա շուկան եմ քերում
ամեն օր, որովհետեւ ես չեմ կարող ինձ ծայսել, եթէ
նրանց էլ ինձ հետ չծայսեմ։

Ես քերում եմ նրանց ինձ հետ, առանց նրանց կամ-
քը հարցնելու, առանց նրանց զիտուրեան։

* * *

Եթէ ես իմ սէրը փայփայեմ դէպի իմ կինը, ես
չեմ կարող քա շուկայում երեւալ։

Եթէ ես իմ զաւակների զգւանիքներովը զբաղւեմ,
քա շուկայում իմ տեղը կզրաւեն այն հայրերը, որոնք

իրենց զաւակների գգւանիներով չեն գրադաւում։ Երէ ես իմ զաւակներին համբոյրներ տամ, քեզ մօտ կզան նրանիք, որ զաւակներ չունեն համբուրելու համար։

Երէ ես համարձակւիմ իմ միտքը գործածել, դու կգտնես նրանց, որոնիք իրենց միտքը չեն գործածում։

Երէ ես թոյլ տամ, որ իմ հոգին իր ցածրութիւնից բարձրանայ եւ սաւառնի երկինքների վրա, քո շուկան կզրաւեն այն հոգիները, որոնիք ցածր թոշելու ունակութիւնը կորցրած չեն։

Երէ ես աղօրելու զնամ իմ տաճարը, քեզ իմ ձեռքից եյափշտակեն իմ այն ընկերները, որոնիք աղօրաբան չեն նանաչում։

Երէ ես ուզեմ իմ կեանիքը ինձ համար պահել եւ իմ կնոջ ու զաւակների համար, ես չեմ ուսինալ ոչինչ, որով կարողանամ իմ կեանիքը եւ իմ կնոջ ու զաւակների կեանիքը պահել։

* * *

Եւ այսպէս՝ ես ձգում եմ իմ աղօրաբանը, քո հետեւից զալու համար։

Ես թողնում եմ իմ կինը, իմ սէրը, իմ զաւակները, իմ հոգին, միտքը, դաւանանիքը՝ քեզ հասնելու, քեզ զտնելու համար։

Ես պարտաւոր եմ երեւալու քո շուկայում։ Բոլոր խոչընդոտները պիտի ժաշիւն այն նամբայից, որ դէպի քեզ է թերում, որ դէպի քո շուկան է տանում։

Կինը արգելիք է. սէրը՝ կաշկանդող. զաւակները՝ նոյնապէս. կրօնը՝ մշտական կերպով. դատադութիւնը՝ ամենից աւելի։

Դրանիք բոլորը պիտի վերանան նամբայից։ Ես պարտաւոր եմ քո նամբան ժայլելու։ Ես պէտք է դէպի քեզ զամ։ Դրանիք բոլորը պիտի հեռանան նամբայից։

* * *

Ահա՛, կրկին առաւօտ է — մէկը հազարաւոր նման առաւօտներից :

Մօտիկ աշտարակի վրա զանգակը զարնում է հինգ անգամ :

Ցուրտ է . ո՞ւժ, ցուրտ է :

Խաւարը կամաց-կամաց փարաւուել է սկսում :

Մուր սենեակի փոքրիկ պատուհանի նեղքերից լոյսի շողերը վախկուտօրէն փորձ են անում ներս բափանցել : Մրուրեան դիմադրութիւնը դեռ մեծ է սենեակի մէջ : Մրեւի շողերից մի քանիսը բեկրեկւած եւ նւազած, ցոլում են Անուշի երեսին : Կինս է : Երեկոյեան ուշ ժամանակ է տուն եկել . — յոզնած, ջարդած : Նա քնած է դեռ շատ պինդ, իր — եւ իմ, — երկու փոքրիկներին ծոցի մէջ առած :

Ես սիրում եմ Անուշին : Նա սիրում է ինձ :

Եւ ես նրա սէրը առած՝ զալիս եմ քեզ մօտ :

Նրա սէրը քեզ վաճառքի եմ բերում կրկին այս առաւօտ : Նա էլ իմ սէրը երեկոյեան վաճառքի պիտի տանի քեզի պէս մի ուրիշի մօտ :

Երբ երեկոյեան վերադառնամ, նա տանը չպիտի լինի :

Երբ նա ուշ ժամանակ վերադառնայ, ես քնած պիտի լինիմ : Մենք ամուսիններ ենք . մենք սիրում ենք իրար : Բայց մենք չենք ապրում իրար հետ : Դու չես բողնում, որ մենք իրար հետ ապրինք : Միեւնոյն յարկի տակ նա ապրում է իր համար . ես ապրում եմ ինձ համար :

Ես իմ կնոջ սէրը քեզ ծախու եմ բերում : Ես մեր ամուսնական կեանքը քեզ վաճառում եմ : Ես իմ կինը քեզ ծախու եմ բերում :

* * *

Թայց միայն իմ կի՞նը :

Ամեն օր մեզ ծախու չե՞մ քերում իմ զաւակներին :
Խեղճե՞ր : Նրանք փաղաքշանքներ չեն տեսել ինձնից :
Երբ ես մի անգամ մօտեցայ եւ իմ այս կոշտացած ձեռներովս ուզեցի զրկել ու փաղաքշել նրանց . նրանք զարմացած , աշքերը մեծ բացած՝ ինձ նայեցին եւ չեին ուզում հաւատալ կատարւածին : Ես էլ սկսում էի շհաւատալ : Այնիւն ժիշ եմ տեսնում ոս նրանց : Այնիւն խորրացած են նրանք ինձնից :

Իմ ձեռները կորցրել են բնդումակութիւնը՝ իմ փոքրիկների երեսների շփումով փաղաքշանքի զգացմունիքը արտայայտելու : Նրանք կոպիտ են , նրանք կոռտերով պատած են . նրանք անընդունակ են մեղմութեան , գուրզուրանքի , փաղաքշանքի :

Յանախ ես ուզում եմ համբուրել նրանց , — իմ փոքրիկներին : Մի անգամ այդպէս արի . նրանք արքացան անուշ քնից , զարմացած նայեցին ինձ , դարձան միւս կողքի վրա եւ կրկին քնեցին : Ես զդացի :

Այժմ ես նրանց չեմ համբուրում : Երբ երեկոյեան վերադառնամ , նրանք քնած պիտի լինին :

Նրանք իմ զաւակներն են : Թայց նրանք ազրում են իմ բնակարանի մէջ որպէս եհւըեր , օտարականներ :

Կարծես քէ նրանք զգում են , որ ես ամեն օր իրենց վանառքի եմ հանում ինձ հետ միասին :

* * *

Խոկ իմ «հոգի՞ն» : Ի՞նչ է հոգին : Ո՞ւր է այդ հոգին : «Հոգի» ունի՞մ ես :

Երբ ես ոռ զօրծարանի շեմքից ներս եմ մտնում , այլեւս ուրիշ քան տեսնո՞ւմ եմ . ուրիշ քան զգո՞ւմ եմ :

Մեթենայից եւ մեթենայի շարժումից բացի ի՞նչ եմ տեսնում ես այդտեղ։ Ենք մեթենայ չե՞մ դառնում տար ժամ շարունակ։ Ո՞ւր է այն ժամանակ իմ «հոգի»ն։ ի՞նչ եմ մտածում ես այն ժամանակ։ Իմ աշխը միշտ մեթենայի պառուտակների հետ չե՞ն դառնում։ Իմ ձեռները նրանց պառուտակներին չե՞ն հետեւում։ Իմ միտքը շարունակ չէ՝ կենդրոնանում մեթենայի վրա։ Ո՞ւր է իմ հոգին։ Դու չե՞ս հանել իմ հոգին ինձնից։ Դու չե՞ս զնել իմ հոգին։

* * *

Դու պալատներ ես կառուցանում։

Իմ մէջ շարունակ բաղձանքներ են զարգանում՝ այդ պալատները խորտակած տեսնել։

Դու ուրախանում, հրեւում ես շարունակ՝ բա նոր պալատներին նայելով։

Ես անզգայ կերպով անցնում եմ այդ պալատների մօտից, եւ կամ արհամարհանելով նայում նրանց վրա։

Այս անզգայուրի՞նն է իմ սրտում, որ դուք «հոգի» էք կոչում։

Այս շար բաղձա՞նքն է իմ սրտում, որ դուք «հոգի» անունով էք մկրտել։

Այդշափ ցածր հոգի կլինի՞։

Այդպիսի հոգին կարծէ՞ որ ապրի։

Այս՛, դու իմ ձեռների ուժը չես զնել միայն։ Դու զնել ես իմ հոգին, իմ զառակները, իմ կինը, իմ դառնանուիքը, իմ կեռնքը, իմ սէքը։

* * *

Երէ ես կարողանայի իմ ձեռները պոկել ինձնից։ Եւ երէ իմ ձեռները կարողանային զործել առանց ինձ,

ես մեզ ծախու կրերէի միայն իմ ձեռները, ու կփրկէի
իմ հոգին, իմ կեանքը եւ իմ սէրը:

Բայց դրանք անբաժան են: Դրանք բոլորը պէտք
են մեզ: Դրանք բոլորը միասին պիտի խառնես, հալ-
ցնես, եւ դրանցից պսպղուն մետաղներ շինես:

Ես միշտ սոսկումով դիտել եմ փայլուն մետաղի
ոյն մի քանի կտորները, որ որպէս շարարավարձ՝ քո
զործակատարը իմ ձեռքի մէջ է դրել ամեն շարար օր:

Այդ շողշողուն եւ կարմրաւուն մետաղի կտորները
միքէ՛ իմ եւ ինձ նմանների քրտինքի բիւրեղները չեն.
որ կարծրացած եւ քարախւած են մեր արեան կար-
մրութեան մէջ:

Այն փայլը, որ ես տեսնում եմ քո տւած մետաղ-
ների վրա, միքէ՛ իմ կնոջ եւ իմ գաւակների ժայտ-
ների փայլը չէ, որ դու յափշտակել ես, մետաղի վրա
սեղմել, իսկ նրանց դէմքները բողել անփայլ, շողերից
զուրկ եւ լոյսից պարապ:

Այդ բոլորը դու արել ես իմ դէմ. իմ գաւակների
դէմ. իմ կնոջը դէմ. իմ կեանքի դէմ:

Ես գայրացած եմ. ես կատաղութեան մէջ եմ:

Բայց իմ ցառումը քո անձին չէ վերաբերում:

Թեզ հրամայող կայ: Թեզ զեկավարող կայ:

Քո գլխին Աստուած կայ, որ այդպէս է կամենում:

Դու քո Աստուծոյ կամքն ես կատարում:

Դու հաւանօրէն քարի մարդ ես եղել:

Հաւանօրէն դու այժմ էլ քարի ես:

Դու, անշուշտ, ուրախանում ես, երբ սէր ես տես-
նում. — չէ՞ որ շնչառոր ես. չէ՞ որ դու քրիստոնեայ
ես:

Դու չես ուզում, հարկաւ, որ իմ կինը դժբախ-
տութեան մէջ բնկնի: Զես կամենում, որ իմ գաւակ-
ները զրկին փաղաքշանքներից, զգւանքներից:

Բայց քո Աստւածը կամենում է այդ քոլորը։ Դու էլ հարկադրւած՝ կամենում ես քո Աստուծոյ կամեցածը։
Դու քարտին ես կատարում։

* * *

Զօրաւո՞ր Աստւած է քո Աստւածը։ Օ՛, շա՞տ զօրաւոր Աստւած է այդ Աստւածը։

Դու մեղաւոր չե՞ս։

Ե՞ս եմ մեղաւոր. իմ կինն է մեղաւոր։ Իմ կնոց զաւակներն են մեղաւոր։ Իմ ընկերներն են մեղաւոր. իմ ընկերոջ ընկերներն են մեղաւոր։

Մե՞նիք էլ մեր Աստւածն ունինք։ Մեզ էլ նա հրամայում է։ Բայց մենիք նրա հրամանները չենիք կատարում. մենիք արհամարհում ենիք նրա հրամանները. մենիք անտեսում ենիք նրա բաղանքները։

Նա չի կամենում. որ մենիք մեր հոգին ծախսենիք։ Դա դէմ է նրա օրէնքներին։ Բայց մենիք ծախսում ենիք։

Նա չի ուզում. որ ես իմ կինը զրկեմ իմ ներկայութիւնից, իմ սիրուց. բայց ես զոկում եմ։

Նա կամենում է, որ ես իմ փոքրիկները շրջապատեմ փաղաքշանիքներով, զգանիքներով։ Բայց ես այդպէս չեմ անում։

Նա, — մեր Աստւածը, — կամենում է, որ մենիք աշխատենիք. բայց մենիք զերադասում ենիք տանջուել։ Նա մեզ ասում է՝ զնացէ՛ք եւ վայելեցէ՛ք։ Բայց մենիք զնում, ուրիշների վայելիքներն ենիք դիտում եւ ուրիշների համար վայելիքներ ստեղծում։

Ես եմ մեղաւոր. իմ ընկերն է մեղաւոր. իմ ընկերոջ ընկերն է մեղաւոր։

Երէ ես իմ զործաւոր ընկերոջը հետ, նրա ընկերների, նրանց կամանց եւ զաւակների հետ այնպէս հպատակւեի իմ Աստծու օրէնքներին, ինչպէս դու եւ քեզ-

պէսներդ էք հպատակում ձեր Աստծուն, այս ժամանակ ես պէտք չէի ունենալ իմ կինը ծախելու. ես իմ սէրը չէի սահմանափակիլ եւ մեղնիլ. ես իմ զաւակները առանց զգւանքների չէի բռղնիլ. ես իմ կեսներ բովանդակուրիւնից չէի զրկիլ:

Ես այն ժամանակ կին կունենայի. որի ՀՅՈՒ Կապրէի. որին Կապրէի. որից կսիրէի, — ոչ այնպէս, ինչպէս դու ես կամինում, այլ այնպէս, ինչպէս ես եւ իմ կինը կկամինային:

Ես այն ժամանակ զաւակներ կրոննեայի. որոնք չէին զարմանալ, երբ ես իրենց դէմքը համբուրէի:

Ես այն ժամանակ հոգի կունենայի, որ կրոչէր, կրաքրանար:

Միտք՝ որ կալանար:

Կեանք՝ որ կյորդէր:

Ասուած՝ որ կհպարտանար:

* * *

Երէ ես քո Աստծուն շտապալեմ, այդպէս չպիտի լինի:

Երէ ես իմ Աստծուն չհետեւիմ, չպիտի կարողանամ տապալել քո Աստծուն:

Մենք բարեկամներ կարող ենք լինել: Մեր քշնամի Ասուածները մեզ քշնամիներ են դարձել:

Դու մեղանոր չես: **Քո Ասուածն է մեղանոր:** Ես գօրանոր է. նա երամայում է, նա քեզ ստիպում է. որ իր շար երամանը կատարես:

Իմ Ասուածը մեղանոր չէ: **Ե՛ս ևմ մեղանոր:** որովհետեւ նա ինձ երամայում է, բայց ես նրա արդար երամանը չեմ կատարում:

Երէ ես իմ Աստծոյ հրամանը կատարեմ, քո Աստ-
ածը այլեւս կկորցնի իր զօրութիւնը ֆեղ վրա:

Ես կդադարեմ գործաւոր լինելուց:

Դու կդադարես գործատէր լինելուց:

Մենի ժարդիկ կդանանի:

VIII

ՔՈ ՏԻՐՈՉ ՈՃԻՐՆԵՐԸ ԵՒ ՔՈ ՈՃԻՐՆԵՐԸ

Ոնիրն ատելի է միշտ. բայց մեր շրջապատը լեցուն է նրանցով:

Եւ ես ուրիշների պէս յանախ ստիպւում եմ երկընտրանի կատարել ոնքագործների միջեւ:

Ես նայում եմ ֆեզ. եւ նայում եմ քո տիրոջ վրա: Այն ժամանակ ես չեմ ընտրում ֆեզ, որ ծառայում ես քո ոնքագործ տիրոջը. այլ ընտրում եմ քո տիրոջը, որ իր ոնիրներին ծառայեցնում է ֆեզ:

Դու էլ, այս', քո տիրոջը պէս ոնիրներ ես գործում:

Դու գործում ես պակասութիւնից. քո տէրը գործում է՝ առատութիւնից:

Դու գործում ես՝ առրելու համար. քո տէրը գործում է՝ իշխելու համար:

Բայց քէ՛ քո տիրոջ ունեցած առատութիւնն եւ քէ՛ նրա իշխանութիւնը ֆեզնից են ծագում:

Քո մէջքը նրա իշխանութեան պատանդանն է:

Քո քրտինքը՝ նրա առատութեան աղբիւրը:

Որովհեսեն քո մէջքի նման կորացած մէջքեր շատ կան, քո տիրոջ իշխանութիւնն էլ մեծ է եւ հաստատուն:

Որովհետեւ քո քրտինքի պէս ուրիշ թիւրաւորներ էլ քրտինք են բափում. քո տիրոջ առատութիւնը բազմազան է եւ անսահման:

Որովհետեւ քո տիրոջ իշխանութիւնը մեծ է եւ նրա առատութիւնն՝ անսահման, նրա գործած ոնիրներն էլ մեծ են եւ անվերջ:

* * *

Քո ոնիրները շատ տարրեր են քո տիրոջ ոնիրներից:

Դու գործում ես փոքր ոնիրներ, որովհետեւ ապրելու համար մեծ պահանջներ չունիս:

Քո տիրոջ ոնիրները մեծ են եւ ահարկու, որովհետեւ իշխելու համար մեծ ոնիրներ են պէտք:

Ես քո տիրոջն եմ ընտրում ո՛չ միայն նրա համար որ նա կարողանում է ծառայեցնել, փոխանակ ծառայելու. այլ եւ նրա համար, որ նա մեծ ոնիրներ է գործում:

Հենց այդ է պատճառը, որ դու ամեն անզամ պատիժ ես ստանում. իսկ քո տէրը ոչ մի անզամ չի պատժում:

* * *

Լսե՞լ ես դու հանճարեղ Թարլէյի գրոյցը՝ նաև մասին:

Ֆրանսիացի անգուգական հեգնարանը մօտ չորս հարիւր տարի առաջ ասում էր թէ մեծ նանները ցանցի ծակոտիկներից անցնում են. իսկ փոքրիկ նանները զարնում են ցանցին եւ ոչնչանում:

Այդպէս չէ՞ միքէ մեր ընկերային ցանցի մէջ: Այդ չէ՞, որ շարունակ տեղի է ունենում մեր շրջապատում: Այդպէս չե՞ն ապացուցում քո ամենօրեայ փորձառութիւնները: Այդ չէ՞ հաստատում քո ոնրագործ տէրը:

Ընկերային ցանցի մէջ ո'չ մի անցք փոքր չէ մի ոնրազործի համար, երէ նա մէծ ոնրազործ է:

Ո'չ մի անցք մեծ չէ մի ոնրազործի համար, երէ նրա գործածը փոքր ոնրազործութիւն է:

Քո տիրոջ ուժը հենց դրա մէջ է — նու մէծ ոնրազործ է:

Ի՞ո բուլութիւնն էլ հենց դրա մէջ է, որ դու փոքր ոնրազործ ես:

Քո տէրը *անարդարութիւն* չէ գործում, որովհետեւ նրա գործածը միշտ մէծ ոնրազործութիւն է: Մեծութիւնն անարդարութիւն չի նաևաչում:

Դու երբէ՛ք արդար չես, որովհետեւ շարունակ փոքր ոնիբներ ես գործում: Փոքրը երբէ՛ք արդար չէ:

Ինչո՞ւ չես ուզում քո տիրոջը նման մէծ լինել:

Ինչո՞ւ չես ձգուում քո տիրոջը նման մէծ եւ արդար ոճրագործ դառնալ:

Դու կարող ես այդ, երէ դու քո տիրոջը հետեւիս:

Դու պէտք է հետեւիս քո տիրոջը, երէ կամենում ես արդար լինել:

Դու պէտք է մեծ ոնրազործ դառնաս, երէ ուզում ես ոնիր գործել եւ ազատ մնալ պատժից:

* * *

Քո տէրը քո գէմ ոեւէ ոնիր չի գործում: Նա գործում է *բոլոր քեզնմանների* դէմ:

Քո ոնիբները քո տիրոջը գէմ են շարունակ, բայց ոչ բոլոր այն տէրերի դէմ, որ նման են քո տիրոջը:

Դու իրաւունք չունիս քո տիրոջը ոնրազործ կոչելու, որովհետեւ նա քո դէմ ոչինչ չի գործում:

Քո տէրը պարտաւոր է քեզ ոնրազործ անւանելու, որովհետեւ դու նրա դէմ ես գործում:

Երեւ դու բոլոր տէրերի դէմ գործես, կոխանակ միայն ք տիրոջը դէմ գործելու, դու ոնրազործ չես լինիլ:

Երեւ դու բոլոր ֆեզնմանների հետ միասին բոլոր ոնրազործ-տէրերի դէմ գործես, այն ժամանակ ք տիրոջը պատժի օրը կգայ եւ դու ազատ կլինիս պատժից: Ո՛չ մի պատիժ, այնուհետեւ չի կարող բաւականաշատ խոշոր լինել՝ ֆեզ պատժելու համար:

Դու այն ժամանակ ազատ կլինիս: Դու այն ժամանակ կպատժես եւ ոչ թէ կպատժիս:

Դու կդառնաս պատիժ՝ պատժի դէմ:

Մեծ ոնիրները բնական մեծ աղկտների պէս են: Նրանց հեղինակները անձեռնմխելի են եւ անպատժելիք:

Փոքր ոնիրները անօրիմալ ծնունդների են նուազ: Ամեն ոք կարող է տեսնել նրանց: Նրանց ծնողները պատժւած են միշտ:

* * *

Գիտե՞մ, դու միայնակ զօրաւոր չես ք տիրոջը պէս մեծ ոնիրներ գործելու համար:

Բայց դու բոյլ ես հենց այն պատճառով, որ չես ուզում ք տիրոջը պէս մեծ ոնիրներ գործնել, ու բաւականում փոքրներով:

Քո տէրը միայնակ էլ կարող է ք դէմ ու բոլոր ֆեզնմանների դէմ ոնիրներ գործել ու ազատ մնալ:

Դու կարող ես ք տիրոջը եւ բոլոր նրանմանների դէմ ոնիրներ գործել, ազատ ու արդար մնալ միայն այն ժամանակ, եթե դու բոլոր քեզնմանների հետ կզործես:

Յիշի՛ր հանճարեղ Ծարլէյի խօսքերը.

«Մեծ նանները ցանցից անցնում են ազատ. Փոքր նանները զարնում են ցանցին եւ խորտակւում»:

Բայց մի՛ մոռանար նաեւ, որ փոքր նաններն էլ միայն առանձին մնացած ժամանակն են խորտակուում: Երբ նրանք միանում են, նրանք էլ են զօրանում: Ընկերային ցանցի ոեւէ մի անցք, այն ժամանակ, նրանք էլ կարող են ընդարձակել եւ անգնիլ ազատորեն:

* * *

Ուզո՞ւմ ես խորտակել, թէ՞ ուզում ես խորտակել:

Սիրո՞ւմ ես ազատ եւ անպատիժ մնալ, թէ՞ սիրում ես, որ ազատութիւնդ խլեն անպատիժ կերպով:

Ուզո՞ւմ ես արդար լինել, թէ՞ ուզում ես շարունակ անարդար մնալ:

Ընտրութիւնը քոնն է:

Շտապի՛ր:

IX

ԲԱՆՏԻ ՄԷԶ ԵՒ ԲԱՆՏԻՑ ԴՈՒՐՍ

Ճռնչալով եւ ծանրաբար երկարէ հոկայ, դժւարա-
շարժ դարրասը բացւեց իմ առջեւ :

«Դուք ազատ էք այլեւս .

«Դուք բարով» :

Խարխլած ծերունին խոպոտ եւ բեկրեկած եր-
շխիններով, մեքենական սահմուրեամբ եւ կապարի չափ
քանձր շնչով արտասանեց այս խօսքերը եւ խունացած
շիրէ կապոցը իմ ձեռքը տռաւ :

Լայնացած խոռոչների մէջ ընկած կիսամար, կէս-
կենցան եւ մոխրագոյն աշֆերը աներապոյր կերպով մի
ակնիքարք ինձ վրա յառեց, ապա շուր եկաւ հեռացաւ-
դանդաղօրէն ու անհոգ :

Այդ դերը կատարած էք ծերունին բառասուն եւ
եօրը տարի շարունակ :

Դարրասը կրկին նոնչաց հետոյ եւ մեղամադա միօ-
րինակուրեամբ, — այս անզամ իմ հետեւից, եւ կրկին
վակիւց ծանրաբար :

* * *

Աներեւակայելի մի ներդաշնակութիւն կար ծերունու խօսքերի, շարժումների եւ երկարէ դարրասի նորմչոցի միջեւ։ Ասէք քէ դարրասը ընդօրինաւ, ել էր ծերունուն, կամ ծերունին՝ դարրասը։

Քառասուն եւ եօր տարի շարունակ նա բացել էր այդ դարրասը եւ զոցել մարդիկ էր ընդունել եւ նամբել՝ միշտ միւնոյն համբերութեամբ, միւնոյն դանդաղկոտութեամբ, ձկան նոյն պաղարինութիւնով։

Թւում էր, որ այդ ծերունին երրէք երիտասարդ չէր եղած։ Այդ ես տեսել էի տարիներ առաջ, երբ նա մի ուժեղ, նարպոտ, կարմրաքուշ երիտասարդի հետ եկել էր ինձ ներս ընդունելու համար։ Այդ կարող էր կարդալ ամեն ո՛վ նրա դէմքի կաշեայ շերտերի վրա, որոնք բազմադարեայ մի մումիայի երգարեայ կարմրութիւնն էին առել։

* * *

Դարրասի երկու կողմերը, գէնքերը աեռներին՝ կանգնած պահակները նայեցին դէմքիս։

Ես տեսայ այդ ակամայից, մեքենաբար,

Նրանց դիմագծերը մի փոքր փոխւեցին։ Զկարողացայ իմանալ՝ ժպի՞ու էր այդ ցաւակցութի՞ւն, քէ՞րախութի՞ւն՝ արհամարհա՞նք հայրտութի՞ւն։ քէ՞նախանձ։

Արդեօֆ զինուրներն իրենք զիտէի՞ն քէ ի՞նչ էր այդ . . .

Ես երես դարձրի։ Զեմ կարող ասնլ, քէ քայլում էի։ Ոտներս սկսել էին տանել ինձ,

Հինգ տարի ապրած էի այնտեղ։

Նո այլեւս բանտից դուրս էի գտնւում։
Նո «ազատ» էի...

* * *

«Դուք ազատ եք այլեւս.

«Գմաք բարով»...

Հնչում էր իմ ականջներում բանտային պաշտօնիացի անհրապոյր այնը՝ երկա՞ր, երկա՞ր ժամանակ։

Երբէք «ազատ» բառը աւելի անհանելի եւ անհերդաշնակ կերպով չէր արտասանել իմ ականջների համար։

Երբէք աւելի պակաս վստահութիւն չէր ներշնչել ինձ այդ գաղափարը, քան այն վայրկեանին, երբ և «ազատ էի այլեւս»։

«Դուք ազատ եք»...

Ազատ եմ ես։

«Գմաք բարով»...

Դնո՞ւմ եմ ես այլեւս յետ չգալու համար։

Միքէ՞ ես առևի կաշկանդւած էի զգում ինձ բանտի մէջ։

Միքէ՞ բարձրաբերձ պարիսպներից եւ երկարութուն դարբասից այս կողմը չկայ անազատութիւն՝ աւելի ննջող, սպանիչ եւ հիւծող։

Միքէ՞ պարիսպներից անդին մքնոլորտը աւելի է կաշկանդում, մեղցնում եւ անէացնում մարդուն։

«Դուք ազատ եք. գնաք բարով»։

Շարունակ արձագանգում են ականջներիս մէջ՝ խարխլած ծերունու խօսքերը՝ ծա՞նը, ննջող, անրակելի շեշտով։

Նրանք սկսում են առնել ինձնից իմ «ազատութիւնը»։

Ինձ շնորհւած «ազատութիւնը» աւելի եւ աւելի խնդրական է դառնում ինձ համար :

Ես մտածում եմ կրկին բանտի մասին . . .

* * *

Ահա՛, դարձեալ քաղաքի մեծ հրապարակի վրան եմ :

Բոլոր տեսարանները իինն են մնացել :

Կարծէք մի զիշեր միայն ես անջատւած եմ եղել այդ տեսարաններից :

Եւ սակայն իի՞նգ տարիներ են անցել :

Տեսէ՛ք, այնուեղ, անկիւնի փոքրիկ դեղատան մօս հաշմանդամ մօւրացկանը իր ցնցոտիների մէջ՝ անցորդների խղճահարութեանն է կոչ անում կրկին :

Տեսէ՛ք, աղամանդազործի մեծ խանութի առջեւ պառաւ, ոտարորիկ կինը թերթերը մեկնում է անցորդներին՝ ծախելու համար : Իր փոքրիկը այժմ մօսը չէ. ո՞վ զիտէ, զուցէ մի ուրիշ անկիւն էլ նա է բռնել եւ թերթ է ծախում : Ո՞վ զիտէ, զուցէ ցրտահար է եղել եւ մեռել . եւ կամ զուցէ զոհ է զնացել օսօմօրիկի մի արկածի, որ այդ անկիւնում յանախ է պատահում :

Ահա՛ եւ այն ընդարձակ սալայատակը, որը վրա ուղիղ իինգ տարի եւ մէկ ամիս առաջ բանուոր Դրիզորը արեան մէջ քարախւած, դազմանակների եւ զինարթակների ուժեղ հարւածներ էր ստանում՝ ոստիկանների եւ զինուորների կողմից :

Աւտորս ինձ խարո՞ւմ են :

Հինգ տարի առաջ հոսած արեան հետքերը չե՞ն . որ իիմա տեսնում եմ ես սալայատակի վրա : Դրիզորի արիւնը չէ՞ , որ տակաւին չորացած, կպած է մընում այդ քարին : Միքէ՞ զարմանալի է այդ : Բոլոր տեսարանները նոյնն են մնացել . բոլոր դէմքերը նոյնն

Են համարեա: Ինչո՞ւ նոյնը չպիտի լինի նաև այն արիւնը, որ ինձ դէպի բանտ առաջնորդեց. որի տեսքը ինձ հանեց հաւասարակշռութիւնից:

Արդեօք ապրո՞ւմ է դեռ խեղն Գրիգորը:

Գուցէ նրա զլուխը մի անգա՞մ էլ պատռել են: Գուցէ միեւնոյն տեղը պատռել են կրկին ուրիշ Գրիգորների զլուխներ՝ մի քանի տասնեակ անգամներ:

Ո՞ւժ, ի՞նչ ննշող է բանուից դուրս: Ի՞նչքան ֆիշ ազատ եմ ես՝ «ազատ» լինելուց յետոյ...

* * *

Հինգ տարի առաջ էր, այո':

Գրիգորը անգործ էր մնացած ուր ամսից ի վեր:

Գործից զրկւելուց յետոյ երկու ամիս շարունակ նա կարողացել էր ապրել իր խնայողութեամբ: Այնուհետեւ պարտերը շարունակ իրար վրա էին դիգրել:

Լիւած եւ յուսահատ, դիմել էր վերջին հնարաւորութեան, — քաղաքային վարչութեան: Պաշտօնեան զայրոյրով եւ արհամարիանին դուրս էր վանդել նրան, երբ նա մի քանի քննադատական խօսքեր էր տել:

Գրիգորը եւս զայրացել էր. նա մոռացել էր այլ-եւս ապագան. ներկան նրա համար այլեւս դադարել էր զոյտրին ունենալուց, եւ նա չէր կարող տեսնել, թէ ինչք ունէ քանով կապաւած է ապազայի հետ: Նա այլեւս շարունակական կեանք չունէր. կեանքի շղթայի օդակները իրարից բաժանել էին: Ապրելը նրա համար միջադեպ էր դարձել: Նա ապրում էր միայն ժումից ծում, կշտանալուց կշտանալ:

Հոգեկան ու ֆիզիքական այդ վիճակի մէջ շուկայով անցնելիս նա տեսել էր, որ իրեն պէս անգործ եւ անօրի մշացած գործաւորները ուտելեղէնների լու-

նուրբների վրա զրոհ տալով՝ ուտելեղէնները յափշտակում են։ Ինչն էլ ուզեցել էր բաժին առնել։ Աստիհաններից մեկի տուր աշխերը տեսել էին այդ։ Եւ երբ ապուխտի կտարը ձեռն առած քերանն էր տարել նա։ նոյն իսկ առանց հացի՝ քաղցր յազեցնելու համար, ոստիկանը մի քանի զինուրբների հետ միասին վրան է յարձակւել եւ անգրաբար հարւածելով՝ տապալել նրան սալայատակի վրա։

* * *

Ես ճանաչում էի Գրիգորին։ Մեկմ թնաւորութեան տէր, աշխատասէր, սակաւապետ մի զործաւոր էր, բաւականաշափ տեղեակ քանորական շարժումներին։ Ազնիւ, արդարամիտ, խաղաղասէր մարդ էր։

Երբ ես տեսայ նրան մաքատելիս ոստիկանի եւ զինուրբների անգրուրիւնների դէմ, ես կորցրի իմ հաւառարակշռութիւնը։ Ես չգիտէի պատճառը։ Ես չէի հաւատում իմ աշխերին։ Ես չէի կարող ներազրել, թէ Գրիգորը կարող էր այնպիսի մի անարդարութիւն, այնպիսի մի յանցանք զործած լինել, որ արժանի լինէր այդպիսի մի պատժի։ անգալաբար ես մօտեցնէի ոստիկաններին։

Եւ այնուհետեւ . . .

Հինգ տարի քանի։

Ես չեմ յիշում թէ արդեօք զարկե՞լ եմ ոստիկանին։ Չեմ յիշում նոյն իսկ, թէ արդեօք ոստիկանը ինձ զարկե՞լ է։

Այսչափը զիտեմ միայն, որ երբ Գրիգորի ծեծից վեց ժամ վերջը աշխերս բացել եմ, զարմանելով դիտել եւ տեսել եմ քաղաքի ոստիկանութեան կենդրուստեղին, մի փոքրիկ սենեակում, երկարէ մի մահնակալի վրա պառկած։

Արդարութեան ախոյեանները հաստատել էին, որ
ես ոստիկանին ծեծել եմ:

Արդարութեան պահապանների պաշտպանները գտել
էին, որ ոստիկանին ծեծողը պէտք է հինգ տարի բան
նստի:

Եւ ես զնացել էի բանտ...

* * *

Ահա՝ կրկին դուրս եմ գտնուում բանտից:

Բայց դարձեալ չքաւորութիւնն եմ տեսնում իմ
շորս կողմբ:

Դարձեալ՝ քաղցած, սովահար երեսներ:

Դարձեալ գործաւորների յուսահատ բանակներ:

Դարձեալ շռայլութիւն այստեղ, եւ քշւառութիւն՝
այնտեղ:

Ես կրկին տեսնում եմ խանութների լեցուն պա-
տուհանների առջեւ լորձումք կուլ տւող գործաւորների
բազմութիւնը:

Իմ լսողութեանն են հասնում դեռ ծեր, ցնցո-
տիապատ մուրացկանի աղաշական, աննոռնի նիշերը:

Կրկին իմ աչքին են զարնուում ցրտահար քերքա-
վանառ կնոջ խղճուկ ոտնամանները, որոնց ծակերից
անգուլայ, կեղսոտ մատները դուրս են նայում եւ
ցուցադրուում ամենին:

Դարձեալ ես տեսնում եմ հարիւրաւը եւ հազա-
րաւը քշւառներ, որոնք ատամններ են կրիտացնուում
շարունակ ունեւորների վրա, բայց «ազնիւ» եւ «ար-
դար» են մնում՝ միայն ոստիկանի փայտի հարւածնե-
րից վախենալով:

Դարձեալ ես նկատում եմ որ կիսաքաղ տղաներ
եւ աղջիկներ կանգնում են նաշարանի պատուհանների

այցեւ եւ իրենց աշխերը յանախորդների պնակների վրա պահում շարունակ :

«Դուք ազատ էք այլեւս» :

Այսպէ՞ս եմ ազատ ես .

Ես այժմ հարիւրաւոր շղրաներով կապւած, կաշ-կանդւած չե՞մ բանտի պարխսպներից դուրս :

«Գնաք բարո՞վ» :

Ինչպէ՞ս : Այլեւս անզործ մարդիկ անզքարար չպի-տի՞ ծեծւին :

Այլեւս բաղցածութիւնը յանցանք չպիտի՞ նանաչւի :

Այլեւս սալայատակների վրա անմեղների արիւն չպիտի՞ քափիի :

Այլեւս չպիտի՞ պատժւին անմեղներին օգնութեան հասնողները :

Այլեւս զոյութիւն չպիտի՞ ունենան անարդարու-թեան եւ անարդարների պահապանները :

Այլեւս . . .

Ես մտածում եմ կրկին բանտի մասին . . .

* * *

Ո՛ւֆ, որքա՞ն կաշկանդւած եմ ես այստեղ : Որ-քա՞ն խեղդող, հեղձուցիչ է օդը բանտից դուրս, երբ իշխում է տակաւին անարդարութիւնը, որի դէմ կոխու մարդուն դէպի բանտ է առաջնորդում :

Միքէ՞ բանտի մէջ մարդ աւելի ազատ չէ :

Այս աղերսական հայեացքները չկան բանտի մէջ :

Այս խղճուկ զոյութիւնները ես չեմ տեսնում այն-տեղ :

Ես այնուն չեմ հանդիպում մայրերի, որ իրենց զաւակների ծնունդներն են անիծում :

Այնուն չկան այս բազմարիւ մատղաշ աղջիկնե-

բը, որ հոգսերի տակ ծանրաբեռնաւած, աշումներ են ապրում, առանց զարնան ժպիտը նամաշած լինելու. որ ձմեռւան են սպասում՝ մատղաշ եւ դալուկի, առանց յոյսի, առանց լոյսի, առանց կեանքի եւ խնդուրեան:

Բանտի մէջ համառարած խեղնուրիւն չկար:

Յուսահաս զործաւոր չկար:

Տանջահար մարդիկ բաժանւած էին ինձնից՝ հաստ պատերով:

Այնուղի ինձ ոչինչ չէր կաշկանդում:

Ես այնուղի, պարիսպներից ներս ապրում էի շարունակ մեծ հոգիների, մեծ մտերի, մեծ սրտերի հետ: Նրանք մոռացնել էին տալիս՝ ինձ փոքր անախորժուրիւնները:

Հոմերոսի եւ Վիրջիլի տաք շութչը ինձ չերմուրիւն էր տալիս:

Դանտէի երեւակայուրեան քեւերի վրա նեծած՝ ևս ազատօրէն սաւառնում էի տիեզերքի անհունուրեան մէջ:

Միլտոնի դեկավարուրեամբ, նրա երեշտակի հետ երկնիքի բարձրուրիւնից դժոխքի անդունդների մէջ ընկած՝ ես կոիւն էի շարունակում, — անհաշտ, անտեղիտալի կոիւր՝ Աստծոյ դէմ:

Շեխսպիրի հետ միասին ես սուզում էի մարդկային հոգու խորերը՝ իմ հոգին զսնելու համար: Եւ զսնում էի:

Բոլոր ժամանակների ազատառենչ, մեծ երգիչների եւ մտերի հետ ես ապրում էի բարձրուրիւնների վրա, կորւած բոլոր ցածուրիւններից, արհամարհելով ամեն կաշկանդում, անտեսելով ամեն բանուրիւն:

Այնուղի չկար ինձ համար այն պետուրիւնը, որ պժգանք էր յարուցանում Պրուդօնի հոգում:

Այնուեղ դադրած էր ինձ համար գոյուրիսն ունենալուց այն օրէնքը, որ Տօլստօյի առելուրիսն էր վառում:

Այնուեղ ինձ հետ խօսում էր Հայնէն, Ֆրայլիզրամը, Գեօրէն եւ Շիլերը:

Բանտի շրջապատը շատ փոքր էր մեծ բռնուրինների համար:

Խսկ ա՞յժմ, այստե՞ղ, բանտից դո՞ւրս, ազատութեան մէջ:

Ամեն ինչ խեղն ամեն ինչ գձուճ ամեն ինչ գորշ եւ ննշող: Ամեն ցաւ մեծ եւ հոկայ: Ամեն ուրախուրիսն կիսատ եւ բռնագրուիկ:

Բանտի մէջ ոչինչ չէր կաշկանդում ինձ, այս':

Բանտից դուրս ամեն ինչ կաշեանդում է. — իմ սիրտը, իմ հոգին, իմ միտքը:

Բանտից դուրսն էլ բանտն է ինձ կաշկանդում:

* * *

Ո՞ւֆ, որքա՞ն ննշիշ է օդը: Որքա՞ն դժւար է շնչելը:

Դէպի՛ բանտ, Կրկին դէպի՛ բանտ...

Դէպի՛ ազատուրիս...

Այնուեղ մարմինս փակւած էր, բայց հոգիս՝ ազատ:

Այստեղ ազատ է մարմինս, բայց հոգիս կաշկանդւած:

Ա՛հ, ննշող է օդը բանտից դուրս:

Դէպի՛ բանտ...

Դէպի՛ ազատուրիս...:

X

ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ ԵՒ ԶՈ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Իմ հայրենիքը մեծ է :

Շատ մեծ է իմ հայրենիքը :

Նա ապրում է իմ սրտի խորութեանը մեջ :

Նա ծրաբած է իմ մտքի անեզր սահմաններում :

Իմ հայրենիքը շատ մեծ է :

Իմ մտքի քեւերը նրա սահմաններն են : Այնքան
ընդարձակ է նա, որքան իմ միտքը կարող է քաշել :

Իմ սրտի ջերմութիւնը նրա զեղեցկութիւնն է կազ-
մում : Այնքան սիրում է նա, որքան իմ սիրուը կարող
է սիրել :

Երջանկութիւններով լեցուն է իմ հայրենիքը :
Այնքան բախտաւորութիւններ կան այնտեղ, որքան իմ
կամքը կարող է քաղձալ :

Նա ամեն տեղ է :

Ամեն տեղ է իմ հայրենիքը :

Ամենուրեմ, ուր մարդիկ կան, որ սիրում են եւ
տանշեռում . ուր քրտինք կայ եւ երազ . ուր կայ ճրգ-
տում եւ յղացում . ուր քանդում կայ եւ ստեղծում :

Իմ հայրենիքը մեկնում է ծովից ծով եւ ցամա-
ֆից ցամաք :

Բոլոր ովկիանոսները նրա լճակներն են կազմում։
Բոլոր հինգ ցամաքները նրա հինգ կղզիներն են։
Աւրիշ բաժանում չունի իմ հայրենիքը։

Զուրը սահման չէ նրա համար։ Ցամաքը արգելու:
չէ ներկայացնում նրա առջեւ։

* * *

Ամեն զեղեցկուրիւն իմ հայրենիքն ունի։

Իմ հայրենիքը մեծուրեան, զեղեցկուր-թան, լաւուրեան հայրենիքն է։

Դա սիրելի է զեղեցկուրեան չափ։ Մեծուրեան
չափ պատկառելի։ Բարուրեան չափ վսեմ. լաւուրիւնից առելի լաւ։

Բոլոր մեծերը իմ հայրենիքի մէջ են։

Բոլոր լաւերը իմ հայրենիքին են պատկանում։

Ամեն զեղեցկուրիւն նա ունի։

Իմ հայրենիքը ծովեր է ընդգրկում. ովեհանոսներ է պարունակում. ցամաքներ է ծրարում։

Դա ցեղեր ունի իր մէջ, ազգեր ունի եւ լեզուներ, կրօններ եւ կուլտեր. խանձող արեգակ եւ ծիւնաքեր երկին։

Իմ հայրենիքը մեծ է աշխարհի չափ։

Աշխարհը իմ հայրենիքն է։

Իմ հայրենիքը աշխարհն է։

* * *

Այո՛, բոլոր մեծերը իմ հայրենիքին են պատկանում։ Բոլոր մեծ իմացականուրիւնները այնուեղ են ապրում։

Իմ հայրենիքից դուրս չեմ մեծուրիւն։ Իմ հայրենիքի մեծուրիւնից դուրս չկայ հայրենի։

Սիբառինեան Աստւածամայրը իմ հայրենիքի մէջ
է վրձինւել:

Դանտէն իմ հայրենիքի մէջ զտաւ իր թէատրիչէին:

Պետրարքը իմ հայրենիքի մէջ ստեղծագործեց:

Հոմերոսը իմ հայրենիքի մէջ կուրացաւ: Ոդիսա-
կանը իմ հայրենիքի մէջ երգւեց:

Շէխապիրը ծնունդն է իմ հայրենիքի:

Թառւստը իմ հայրենիքումն է կենդանուրիւն
առել:

Միւսսէ եւ Թագօր իմ հայրենիքի զաւակներն են:

Դավինչիի վրձինը իմ հայրենիքի մէջ արտադրւեց:

Ռեմբրանդի կուարը իմ հայրենիքի բոյսերիցն է
գործւել:

Բոդենի Մտածողը իմ հայրենիքի խորհուրդը ու-
ներ իր մտքի մէջ:

Բոլոր մեծերը իմ հայրենիքին են պատկանում:

Իմ հայրենիքը բոլոր մեծերին է պատկանում:

* * *

Եսկ քն հայրենի՞քը:

Որքա՞ն տգեղ է նա: Որքա՞ն փոքր է նա: Որ-
քա՞ն խեղն եւ աննարակ:

Ինչքա՞ն վատեր կան քն հայրենիքի մէջ: Ինչքա՞ն
վառուրիններ են ապրում քն հայրենիքի պէս հայ-
րենիքների մէջ:

Թիմուրլենգ եւ Զենգիզխան քն հայրենիքի զաւակ-
ներն են: Համիդ եւ Վիլհելմ քն հայրենիքի օդովն են
սնւել:

Ես տեսնում եմ այնտեղ խորտակւած զանկեր եւ
ջարդւած դիակներ: Ոսկրացած ձեռներ եւ ժարացած
սրտեր:

Տանարներ կան քո հայրենիքի մէջ, ուր անէծք-ներ են կարդացւում: Պալատներ կան այնուեղ, ուր խեղճուրիւնն է քազաւրում: Սրտեր կան այնուեղ, ուր օձերն են զալարւում: Եւ զլուխներ, որոնց մէջ դեւերն են բնակում:

Քո հայրենիքի մէջ ես երկինք եմ տեսել, որ երկրից ցածր է: Ես ասուածներ եմ նաևաշում քո հայրենիքում, որ մարդկանցից ողորմուրիւն են հայցում. Եւ մարդիկ, որ ասուածներին խարում են ու արհամարհում:

Ես ասում եմ այդ հայրենիքը: Ես ասում եմ քո հայրենիքը: Ես ասում եմ քո հայրենիքի պէս բոլոր հայրենիքները:

Քո հայրենիքը իմ հայրենիքի մէջ է: Քո հայրենիքի պէս շատ հայրենիքներ, — անր՞ւ եւ անհամար, — իմ հայրենիքի մէջ են:

Մե՛ծ է նա, — իմ հայրենիքը:

Իմ հայրենիքի մեծուրեանը մէջ ոչնչանում են քո հայրենիքի վատուրիւններո. բոլոր վատուրիւնները՝ քո հայրենիքի պէս հայրենիքների:

Քո հայրենիքը չունի ոչինչ իմ հայրենիքից:

Որքան խեղն է նա: Որքան փոքր է նա:

Որքան խեղն ես դո՛ւ՝ քո խեղն հայրենիքի մէջ: Որքան խղճալի ես դո՛ւ՝ քո հայրենիքի խեղճուրեանը մէջ:

Քո հայրենիքը շատ քշնամիներ ունի: Բոլոր մընացած հայրենիքները քո հայրենիքի քշնամիներն են: Քո հայրենիքը բոլոր մնացած հայրենիքների քշնամին է:

Քո հայրենիքը ատելուրեան եւ քշնամուրեան հայրենիքն է:

* * *

Ատելուրիւն չկայ իմ հայրենիքի մէջ : Նախանձը մոռացւած է այնուեղ : Զարուրիւնը՝ չորացած : Ոլոր՝ չծնւած : Խարէուրիւնը՝ մեռած : Թշնամուրիւնը՝ չը յղացւած :

Բնուրիւնը յանախ աղէտներ է բերում իմ հայրենիքին : Բայց նա այնքան մեծ է, որ ամենախոշոր աղէտներն անզամ չնշին են երեւում :

Իմ հայրենիքի ծնունդը յայտնի չէ ինձ : Գիտեմ միայն, որ միլիօնաւոր տարիներ ապրած է նա : Մաս չի ճանաչում նա :

Յաւիտենից է իմ հայրենիքը : Անմահ է նա, — յաւիտենական :

Խե՞ղճ, ինչո՞ւ կառչում ես դու քո հայրենիքի խեղճուրեանը :

Չե՞ս իմանում, որ քո հայրենիքի պէս շատ հայրենիքներ քնչիել, ոչնչացել են աշխարհի երեսից :

Չե՞ս իմանում, որ միայն իմ հայրենիքն է հաստատուն եւ անխորտակելի :

Ցիմա՛ր դու, որ սահմանափակւում ես քո տեսադուրեանը սահմաններով :

Անմի՛տ դու, որ լուում ես միայն Քամի եւ Յարէրի ծայնը : Ամէնքս էլ Աղամի որդիներն ենք : Ամէնքս էլ աղամներ ենք եւ ոչի՞նչ խորք է մեզի, ինչ աղամային է :

Որքա՛ն փոքր ես դու որքա՛ն փոքրողի ես դու . որքա՛ն փոքրամիտ ես դու : Որչա՛փ խղնահարելի համեստ են եւ վախկոտ՝ քո քաղձանքներն ու ձգուունները :

* * *

Քո նախօնիքները կռիւներ մղեցին. նահատակութիւններ տւին. արիւնով սրսկեցին ամեն մի բիդողի ետոր, որին դու կառչած ես այսօր։ Քո նախօնիքները ՆԻԱՃԵՑԻՆ։

Ինչո՞ւ քո կամքը եւ քո միտքը կանգ են առնում քո հայրենիքի սահմանների առջև։ Ինչո՞ւ դու չես շարունակում նւանել։

Չե՞ս տեսնում, որ այնուեղ, քո հայրենիքի սահմաններից այն կողմը, մտքի, հոգու, զեղեցկութեան մարգագետիններն են տարածում, որ տէր չունեն, որովհետեւ ամենին են պատկանում։ Ինչո՞ւ, ո՞վ դու բույամորք, ինչո՞ւ չես ուզում նւանել այդ մարզը՝ առանց ուժի, առանց բնութեան, առանց արիւնի, այլ միայն եսուցողութեամբ եւ սրտով։

Մի՞րէ սէրը դէպի հայրենիքը՝ արեան շիրերով պիտի արտայայտի։

Մի՞րէ նւանումը զէնիքով տեղի պիտի ունենայ մշտապէս։

Մի՞րէ նւանածը հող պիտի լինի եւ նւանողը երացանաձիգ։

Ինչո՞ւ չես ուզում բնդարձակել քո հայրենիքը, մեծացնել նրան, քո հայրենիքիը իմ հայրենիքի նման շինել։

Ինչո՞ւ քո սիրտը չես ընդարձակում, իմ հայրենիքի մեծութիւնը ընդգրկելու չափ։

* * *

Մե՛ծ է, անհունօրէն մեծ է իմ հայրենիքը։

Նա տարածում է բոլոր ցամաքների վրա. բոլոր

ջրերի լայնութեամբ . բոլոր երկինքների ընդարձակութեամբ . բոլոր սարերի բարձրութեամբ :

Նա կանգ չէ առնում Մատիսի և Տաւրոսի ստորոտներում : Նա նեղքում անցնում է Կովկասեան լեռնաշղթամ, Հիմալայը, Անդերը, Ալպերը, Էլբուրսը, Եվերեսոր և Ասպալաչը :

Ո՞չ մի ձոր, որքան էլ խոր լինի նա, չէ բաժանում ինձ իմ հայրենիքից :

Ոչ մի սար, որքան էլ բարձր լինի նա, արգելք չի ներկայացնում իմ հայրենիքի համար :

Ոչ մի դաշտ, որքան էլ ընդարձակ լինի նա, ոչ մի անտառ, որքան էլ անանցանելի, ոչ մի անապատ . որքան էլ աւազուտ, չի կարող գատել ինձ իմ հայրենիքից :

Ես բոլոր բարձրութիւններից բարձր է . բոլոր խորութիւններից խոր . բոլոր ընդարձակութիւններից ընդարձակ :

Նա ամեն տեղ է, ուր լաւ է ստեղծագործւել . ուր գեղեցիկն է կերտւել . ուր իմաստունն է յգացւել . ուր բարիթ է զգացւել . ուր արդարն է կամեցւնլ :

Իմ հայրենիքը պարունակում է միայն սբանչացումի արժանին բարոյականօրէն իդեալականը . մարդկայնօրէն աստւածայինը :

Ես ճամփորդում եմ իմ հայրենիքի մէջ ելեկտրականութեան քեւերով . մտֆի ալիքներով . սրտի քըրքիւներով :

Ես ճանաչում եմ իմ հայրենիքի ամեն մի անկիւն : Ես ապրում եմ նրա ամեն կտորի վրա : Նա ամբողջութեամբ ինձ և պատկանում . ոչ ոք կարող է իմ ձեռքից առնել իմ հայրենիքը : Նա ապրում է իմ մէջ :

Մե՞ծ է, հսկայակա՞ն է իմ հայրենիքը :
 Նա մեծ է աշխարհի չռփի :
 Աշխարհը իմ հայրենիքն է :
 Իմ հայրենիքը աշխարհն է :
 Յիմա՞ր, քողի՞ր քո հայրենիքը . ապրի՞ր իմ հայ-
 րենիքի մէջ :

Բոլոր ՄԱՐԴԿԱՆՑ համար տեղ կայ իմ հայրե-
 նիքում :

ԻՄ ԱՍՏԻԱԾՆԵՐԸ ԵՒ ՔՈ ԱՍՏԻԱԾՆԵՐԸ

Դու էլ ինձ պէս քո աստιածներն ունիս :

Բայց նրանք նման չեն իմ աստιածներին :

Քո աստιածները բարի են, արդար, սիրող եւ ողորմած :

Իմ աստιածները չար են, անարդար, ատող եւ ամոռնորմ :

Պատահում է երրեսնի, որ քո աստιածներն էլ շատ խիստ են լինում եւ դաժան : Բայց դա նրանց չարութիւնիցը չի ծագում, այլ նրանց արդարադատութիւնիցը :

Յիշո՞ւմ ես, քո ապրած քաղաքի մէջ տարիներ առաջ մի մեծ երկրաշարժ տեղի ունեցաւ :

Քո աստածների կամքն էր այդ :

Հազարաւոր կանայք, ծերեր, մանուկներ եւ երիտասարդներ տների ու ժայռերի փլատակների տակ քաղւեցին :

Սիրող ամուսիններ փետացան տաք համբոյրների եւ զրկախառնութիւնների մէջ :

Կարնակեր երախանների քարմ շրբունքները չորացան եւ կպած մնացին իրենց մայրերի լեցուն ստիճն ներին :

Շատ մայրերի արգանդներ էլ զերեզմաններ դարձան չծնւած զաւակների համար :

«Դա չարութիւն էր» . — պիտի մտածես դու :

Իրաւ է, այդպէս կամեցել էին քո աստւածները : Բայց դա քո աստւածների արդարամտութիւնիցն էր բղխում : Դա խստութիւն էր եւ ոչ չարութիւն :

Չեր քաղաքի մէջ անարդար եւ չար մարդիկ կային . քաղաքը պիտի աւերւէր, որպէսզի ոչնչանային չարութիւններն ու անարդարութիւնները :

* * *

Այդպէս չեն վարւում, սակայն, իմ աստւածները :

Նրանց աշերի առջեւ ամեն օր, ամեն ժամ, անորդարութիւններ եւ չարութիւններ են կատարւում : Բայց այնքան անարդար են նրանք, ոռ բոլոր յանցագործներին եւ անիրաւններին անպատճ են բողնում :

Քո աստւածները, — քո բարի աստւածները, — որքայութիւն, դրախտ են խոստանում քեզ :

Իմ չար աստւածները դժոխք ունին միայն ինձ եւ ինձ-նմանների համար :

Դու պիտի զնաս վայելելու քո աստւածների արքայութիւնը :

Ես պիտի երբամ տանջւելու իմ աստւածների դըժոխքի մէջ :

Տրունջ չեմ յայտնում :

Զղջում չեմ անում :

Նախանձ չեմ արտայայտում :

Ես պիտի զնամ այնտեղ տանջւելու իմ իսկ կամ քով : Ես արժանի եմ այդ տանջանքին : Ես վաստակել եմ այդ : Ես արժանի եմ իմ աստւածների դժոխքին :

* * *

Գիտե՞ս . . թէ որոնց պիտի գտնեմ ևս այնտեղ, — իմ չար աստւածների մօտ, նրանց դժոխում:

Պատմեմ քեզ:

Զգործանաւ . . շնորհագիր . . բռլամորք չգողնւիս: Հասկացի՞ր միայն:

Այնտեղ, իմ չար աստւածների դժոխքի մէջ պիտի լինի... Ասե՞մ, — պիտի լինի... Քո ՄԱՅՐԸ:

Դու շատ սիրում էիր նրան: ՄԱՅՐ էր չէ՞: Բայց եւ շա՞տ քարի, գուրզուրացող մի մայր:

Խեղճ կին էր: Տանջանքները ծանրապէս նստել էին երա դէմքի խորշումների վրա: Հոգսերի եւ դառնուրիւնների կեանքն էր ապրած միայն:

Իր տկարացած աշխերով երես գտակների մորթուումն էր տեսել: Այդ պատճառով իր միակ գուակին, — քե՞զ — այնչա՞փ էր սիրում. — յնլազարի պէս:

Դու ինն տարեկան էիր. կայտառ, վառվոուն, ուժեղ մի տղայ: Մայրդ ամեն Շաբար երեկոյ բն քեզը բռնած՝ գնում էր տանարը աղօրելու, — բն աստւածների տանարը:

Լւացարար էր նա: Հայրդ վաղուց մեռած էր:

Մի օր, — Յունվար ամսին էր դա, յիշո՞ւմ ես, — դու շատ գեշ կերպով հիւանդացել էիր: Մայրդ խմանք էր տանում քեզ վրա:

Վաս տարի էր: Սոսկալի վաս տարի էր:

Հացը քանիզացել էր: Պործ չկար. որամ չկառ: Ասես թէ մարդկանց շորերը այլեւս չէին կեղտուուում. ոչ ոք լւայր չէր բերում:

Դու շարունակ տեսի մէջ էիր. յանախակի խտդող էիր ու գում: Յունվար ամի՞սը... Որտեղի՞ց յա-

դող պիտի գտնւէր քեզ համար : Յետոյ խնձոր էիր ուզում : Այդ էլ չկար : Վերջը զոհ էիր լինում, երբ մայրդ քեզ մի կտոր հաց էր տալիս : Մի անգամ էլ նա տւալ քեզ վերջին կտորը : Ամբողջ օրը ինքը ոչինչ չէր կերել . պահել էր քեզ համար :

Հետեւեալ օրը նորից հաց ուզեցիր :

Մայրդ ասաց, թէ բժիշկը հրամայել է, որ ոչինչ չուտես, կմեռնիս : Դու մի փոքր հանդարտւեցիր : Բայց քաղցը տանջում էր քեզ : Բժշկի հրամանը կորցրաւ շուտով իր ուժը :

Դու կրկին հաց ուզեցիր . կրկին եւ կրկին ...

Մայրդ մտատանջութեան մէջ էր : Մի կոիւ կար նրա հոգում . մի սոսկալի կոիւ, որից դու ոչինչ չէիր հասկանում :

Զեր հարեւանուիու փոքրիկ վարսիկն էլ հիւանդ էր, — բո խաղընկերուիին : Նրա մայրն էլ խեղճ էր : Դա էլ իր փոքրիկի համար էր մտահոգում : Ուրիշ անգամներ օգնել էր հացով . այս անգամ ինքն էլ հաց չուներ : Անօրի էր նաեւ իր վարսիկը : Կիսաքաղց էր նաեւ ինքը :

Եւ . . . զնաց մայրդ :

Քիչ յետոյ նա վերադառն հացը ճեռքին : Երբ մա ուրախ դէմքով քեզ մօտեցաւ, իր ժպտի մէջ մի սարսափելի դանութիւն կար :

Դու չտեսար այդ, — քաղցած էիր :

Դու չհասկացար նրան, — փոքր էիր :

Մի բոպէ դու մոռացար հիւանդութիւնդ : Հացը համարեա թէ յափշտակեցիր մօրդ ճեռքիցը եւ կերար ազահարար :

Կասկածը դեռ բոյն չէր դրել բո հոգում : Աշ-

խարիր վատութիւն չունեք քեզ համար։ Մայրդ երեշտակ էր քո աչքի առջեւ։

Դու կերար ՄՈՐԴ բերած հացը։

Դողացւած հաց էր այդ…

* * *

Քո արդար եւ արքուն աստւածները հսկում էին վերեւից։ Երբ մայրդ հացագործի մօս փեշի տակ արագօրէն քազցրաւ հացի կտորը եւ աննկատելի կերպով դուրս եկաւ խանութից, նրանք տեսան այնտեղից։

Զայրոյքը համակեց նրանց, — քո աստւածներին։ Իրենց աչքի առջեւ գործւած անիրաւութիւնը կատաղուրիւն բերաւ նրանց վրա. — չէ՞ ո՞ր նրանք արդար էին։

Եւ երբ մայրդ մեռաւ, — քո խեղն, չարատանջ, ֆեզ սիրող, ֆեզնից սիրւած, քայց ԳՈՐ մայրդ, — քո աստւածները չընդունեցին նրան։

Քո արքայութեան դուռը գոյցւեց նրա առջեւ։

Մայրդ մեղանչել էր արդարութեան դեմ։ Նա գողուրիւն էր արել։ Նա վիրաւորել էր քո արդարադատ աստւածների զգացումները։

Այդ տեսան իմ աստւածները. իմ չար, անարդար աստւածները։ Նրանք զիտէին, որ մայրդ էլ չարերիցը եւ անիրաւմերիցն է։ Ծրախացան։ Իրենց յանցաւոր ձեռքերը մեկնեցին դէպի յանցագործ մայրդ եւ քաշեցին դէպի իրենց օրեւանը, — դէպի իմ դժոխքը։

Այնտեղ է քո ՄԱՅՐԸ, — իմ դժոխքի մէջ։

* * *

Մի անգամ ուրիշ քան պատահեց։

Դու այլեւս հիւանդ չէիր։ Մօրդ խնամքը ֆեզ փրկել էր։

Երբ ձեր քաղաքի շուկայով անցնում էինք, մը ծեր, խեղն, ցնցոտիապատ աղքատ ձեռները մեկնած՝ ողորմութիւն էր խնդրում։ Նառ մարդիկ անցնում էին տռանց ուշադրութիւն դարձնելու։

Նրա մօտով անցաւ ձեր քաղաքի անւանի ունեւորներից մէկը։ Դործարանատէր էր։ Մի-քանի հարիւր զործաւորներ աշխատում էին նրա մօտ։ Բարի մարդ էր։ Աղքատին տեսնելով զգացմունքները շարժւեցին։ Գրպանից հանեց մի արծար դրամ եւ սեղմեց աղքատի քուոի մէջ։

Վերեւից քո աստւածները տեսան այդ, բարութիւն սիրող, արդարութիւն եւ ողորմութիւն զնահատող աստւածները։

Երբ այդ ունեւորը մեռաւ, քո աստւածները շուենով նրան առաջնորդեցին դէպի քո արքայութիւնը։

Պատուհեց, որ մի օր այդ բարի հարուստը ուզնց իմ դժոխքին մի այցելութիւն տալ։ Հետաքրքրած էր այնտեղի կեանենով։ Կամենում էր տեսնել, թէ մարդիկ այնտեղ ինչպէս են տանջում։ հաւանօրէն նրանց օգնելու նպատակով։

Իմ աստւածները, իմ չար, դաժան, անարդար աստւածները քոյլ չուին նրան։

Դու արժանի ես միայն արքայութեան, — այսպէս ասացին նրանք։ Մեր դժոխքը անարժան է քեզ։ Մէկ հատիկ հայեացք անգամ քո կողմից մեր դժոխքի վրա, քոյլ չի տրիլ քեզ։

Այդ հարուստը բարի էր, ողորմած։ Իմ աստւածները՝ չար եւ անողորմ։ Զընդունեցին նրան։

Եւ նու մնաց քո աստւածների մօտ, նրանց արքայութեան մէջ։

* * *

Թո սպամեւած եղրայրներն եւս իմ աստւածների մօս են: Արուսը եւս այնուեղ է փոքրիկ, խարտեաշ, կապտաչեայ Արուսը, որին սիրում էիր մոռանալու չարեւ որը դաւահանութեան մեղքը գործեց քա դէմ:

Այնուեղ են բոլոր այն մարդիկ, որ իրենց կեանքում զէնք, բոնուրիւն են գործածել՝ քա աստւածների կամքին հակառակ:

Այնուեղ են բոլոր յեղափոխականները. ունեւորների արդար սեփականութիւնը յափշտակող բոլոր գործաորները. օրէնքների, արդարութեան, իրաւունքի դէմ դաւադրող բոլոր ժաղաքացիները: Այնուեղ են այն բոլոր չար մարդիկ, որ խաղացել են երբէք ուժանակների եւ պայքուցիների հետ. որ ժողովուրդ են զրգուել՝ քա աստւածների կամքովը զահի վրա բազմած իշխանաւորների դէմ:

Տեսնո՞ւմ ես, որքան սոսկալի է իմ աստւածների օրեւանը: Գողեր, մարդասպաններ, օրէնքի դէմ դաւադրողներ, դատապարտւածներ, չարեր, անարդարներ լիցւած են այնուեղ:

Ես էլ ընտրել եմ իմ աստւածների օրեւանը: Ես էլ ուզում եմ իմ չար աստւածների դժոխքը զնալ:

Դիտեմ, որ իմ մայրն էլ այնուեղ պիտի լինի: Նա էլ իր կեանքի մէջ մեղքեր է գործել: Նա էլ ինձ համար հաց է զողացել, երբ ես հիւանդ էի:

Դիտեմ, որ իմ չար եղրայրներն էլ այնուեղ պիտի լինին: Նրանք էլ զէնք էին առել օրէնքի դէմ:

Դիտեմ, որ այնուեղ պիտի լինին այն բոլոր մարդիկ, որոնց հետ միասին ես չարութիւններ եմ արել. որոնց օժանդակութեամբ ես դաւեր եմ լարել. որոնց հետ համախորհուրդ՝ ես կործանարար ծրագիրներ եմ

յղացել . որոնց հետ երազել եմ բռնութեան խորտակումի մասին . կամեցել եմ յեղափոխութիւն . առաջացրել եմ կործանում . խրախուսել եմ անօրինութիւն :

Գիտեմ , որ այնուեղ պիտի լինին իմ չար զաղափարակիցները . իմ անարդար դաւանակիցները . իմ դատապարտած վիճակակիցները :

Ես գնում եմ նրանց հետ միասին տանջւելու համար . արիւնը քաշում է ինձ նրանց մօտ : Ես գնում եմ նրանց հետ միասին ծրագրելու , երազելու , աշխատելու համար : Ես գնում եմ նրանց հետ միասին ու բարի եւ արդար աստιածների արքայութեան դէմ դաւադրութիւններ կազմելու համար :

Իմ դժոխքը արժանի չէ ֆեզ :

Ֆեզ արժանի են միայն ու աստιածները եւ ու աստιածների արքայութիւնը :

Գնա՞ դու այնուեղ : Վայելի՛ր ու զող մօրիցը կը տրւած . ու անիրաւ խաղընկերներիցը հեռու . ու արիւնասէր բարեկամներիցը անջատ : Քո դաւանան տարփածուներիցը բաժանւած :

* * *

Դու արդար ես . գնա՞ ու արդար աստιածների մօտ :

Ես անարդար եմ : Ես կմնամ իմ դաժան եւ չարտուածների մօտ :

Դու արժանի ես վայելի՛ք : Գնա՞ եւ վայելի՛ր ու բարի աստιածների արքայութիւնը :

Ես արժանի եմ դժոխքի : Ես կերպամ տանջւելու իմ չար աստιածների դժոխքի մէջ :

«Մա՞յր» չկանչես այնուեղից : Քո ձայնը չպիտի հանի այլեւս ու մօր ականջին : Սոսկալի , անանցանելի մի անդունդ պիտի լինի ու արքայութեան եւ ու մօրը դժոխքի միջեւ :

«Ընկեր» շնչառ : Մեր դժոխքի մէջ այլեւս ընկեր
չպիտի ունենաս :

«Արուս» շշնչառ : Սէրը մեռած պիտի լինի քեզ
մօռ :

«Օգնուքիւն» շաղերսես : Մենք բոլորս մեր աստ-
րածների պէս անարդար պիտի լինինք եւ անկարող՝
արդարներին օգնելու :

«Դարձ» չկամենաս : Ամեն կամուրջ խորտակւած
պիտի լինի այլեւս :

Դու մնացի՛ր քո զող մօրիցը հեռու :

Ես կերպամ նրա հետ տանջւելու :

Դու զնա՛ քո արդար աստւածների ետեւից :

Ես կմնամ իմ դաժան աստւածների մօռ :

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՏԵՂ

ԻՄ ՀԱԻԱՏՔԸ

Կրօն չունիմ ես, քայց հաւատացող եմ:

Ահա՛, ինչի եմ հաւատում ես:

Ես հաւատում եմ ապագայ մի մարդկութեան, որ պիտի ապրի առանց օրինական եւ ապօրինի յախշտակութեան՝ առանց պատերազմների. առանց սարդկային նախնիքների եւ հեկատօմբների: Որը չպիտի նաևոչ: Մարարօն եւ Սեղան. Վատերլօ եւ Արմադա, Վերդէօն եւ Տանինքերգ. ո՛չ ինկ Աւարայր եւ հանասօր:

Հաւատում եմ մի մարդկութեան, որի համար իրեն նմաններին սպանելը՝ ինչ պարագայի տնկ էլ լինի այդ, քաջութիւն կամ հերոսութիւն չպիտի համարւի. այլ բուլութիւն եւ բարբարոսութիւն. որը պիտի հրաժարի որպէս մեծեր նանաշել Բիսմարկ եւ Նայոլէօն. Ալեքսանդր Մակեդոնացի եւ Ֆրիդրիխ Բ., Վիլինգտոն եւ Հինդենբուրգ:

Հաւատում եմ զալիք մի հասարակականգի, որի մէջ օրէնքը չպիտի լինի ուժի հետեւանք, բանութեան սրբազնում, իրաւագրկումի արդիւնք, այլ մարդկային զարգացած խղճի կանոն, գիտակցութեան արտայայտիչ: Եթի օրէնքը չպիտի սահմանափակւի մարդ-

կամց պատժելու համար, այլ մարդիկ ներքնօրէն արդէն պատժած պիտի զգան, եթէ ոտնահարած են հասարակօգուտ կանոնները: Երբ ամենազօրաւոր օրէնքը մարդու խիղնը պիտի լինի. եւ ամենաքարձր դառաւորը՝ նրա զիտակցութիւնը:

Հաւատում եմ մի մարդկուրեան, որի մէջ մարդկային յանցագործորիւնը սահմանափակւած պիտի մընայ անհատների ֆիզիքական եւ հոգեկան անօրմալուրեամբ, եւ ոչ հասարակական չարիքաւոր պայմաններով. երբ յանցագործը ոչ թէ պիտի պատժի, այլ պիտի բռնի, ուղղի, դաստիարակի. երբ առաքինի մարդիկ յանցագործ չպիտի դառնան, այլ յանցագործները՝ առաքինի. երբ բանտեր գոյուրիւն չպիտի ունենան, եւ ոչ ոք է, որ պիտի ուղենայ բանտապետ դառնալ: Երբ մարդկանց էուրիւնը սարսուռավ պիտի լցւի «դահին», բարը լսելիս:

* * *

Ես հաւատում եմ համայն մի մարդկուրեան, որը «դասակարգ» գաղափարը պիտի մոռանայ. որը դրամ չպիտի ճանաչի. որի մէջ աշխատանքը տանջանք չպիտի լինի մարդկանց մեծամասնուրեան համար, ոչ եւ պիտի արեամարիւի վայելող փոքրամասնուրեան կողմէց: Հաւատում եմ այն մարդկուրեան, որ աշխատանքը նօրմալ անձի համար նոյնպիսի մի անհրաժեշտուրիւն, նոյնպիսի մի վայելք պիտի դարձնի, ինչպէս կեանքի բարձրագոյն վայելքները: Զէ, հաւատացողն եմ այն մարդկուրեան, որի համար աշխատանքը նոյն իսկ ամենամեծը, ամենաբռվանդակալիցը պիտի լինի վայելքներից:

Հաւատում եմ այն աշխարհին, որտեղ խօսք չպիտի լինի շահագործողների եւ շահագործողների մա-

սին . որտեղ «տիրող» եւ «տիրած» զադափարները պատմութեան արխիտեկտի մէջ քաղաքածուն պիտի մնան փոշեծածկ . որտեղ յափշտակողներ եւ յափշտակւածներ գոյութիւն չպիտի ունենան . այլ փոխադարձ օգնութիւն , համազործակցութիւն , բոլորանւէր սէր , ընդհանուր յարգանք : Որտեղ կատարեալ ներդաշնակութիւն պիտի տիրէ մարդկանց խօսքերի եւ գործերի միջեւ . եւ խօսքը գործ պիտի նշանակէ միանգամայն :

Հաւատում եմ մարդկային մի ապագայի , երբ մի ազգի եւ ժողովրդի գոյութիւն ու առաջադիմութիւնն միւսների ոչնչացման , յետամնացութեան վրա չպիտի լինի հաստատած . երբ մէկի զարգացումը եւ բարորութիւնը՝ զարգացում եւ բարօրութիւնն պիտի լինի նաև միւսների համար . երբ քշւառութիւնը բոլորի համար պիտի լինի . բախտաւորութիւնը ամէնքը պիտի վայելեն : Երբ փոքրներն ու բոյլերը չպիտի ապրին մշտական սարսափների եւ մտահոգութեան մէջ , թէ՝ իրենց գոյութիւնը կարող է ոչնչանալ . այլ երբ մեծեցը իրենիք պիտի ձգտեն տալ փոքրներին , ինչ սրանց է պակասում . առնել փոքրներից , ինչ իրենիք չունեն . երբ բոնութիւնը երկիւդ կամ պատկառանք չէ , որ պիտի յարուցանէ , այլ խղճահարութիւն եւ արգահատանք :

Հաւատում եմ մարդկային մի բարոյականութեան , երբ բոյլերին ինքնօգնութեան վարժեցնելը եւ նրանց այդպիսով զօրացնելը մարդկային առաքինութեան անմերժելի պահանջը պիտի լինի . երբ բոյլին պաշտառնելը առաքինութիւն պիտի համարւի միայն այն դէպքում , եթէ ինքնօգնութեան վարժեցումը իր բոլոր միջոցները սպառած կլինի :

Հաւատում եմ այն բարոյականութեան , որի չափանիշերով առաքինին չպիտի փառարանւի . հերոսականը չպիտի արժանանայ ծափահարութեան . բարին

չպիտի գնահատուի . ոչ էլ վեհանձնութիւնը զարմանք պիտի առաջացնի : Հաւատում եմ այդ բոլորին , որովհետեւ մարդիկ այլ կերպ չպիտի կարողանան լինել , քան առաքինի եւ բարի , հերոսական եւ վեհանձն , ներող եւ սիրող , ինքնազո՞ն եւ այլասէր :

* * *

Ես հաւատում եմ մի Հանրապետութեան , — ընդարձակ , պարփակուն , համամարդկային մի Հանրապետութեան , ո՛չ այնպիսի մէկին , որպիսին Ամերիկան է , կամ Ֆրանսիականը . ո՛չ անգամ Հելվեդեան Հանրապետութեան պէս մէկին : Ես հաւատում եմ Սոցիալիստական այն Մեծ Հանրապետութեան , որի նախագահը մարդկային առաջաւոր բանականութիւնը պիտի լինի . իսկ մարդկանց զարգացած եւ նրացած խրդները նրա խորիրդականները պիտի կազմեն :

Հաւատացողն եմ ես ապագայ ազգութիւններին , որոնք պիտի ապրին առանց կրօնների , առանց կրօնական հաւատի , առանց սահմանների : Հաւատում եմ մի աւելի հեռաւոր մարդկութեան , որ պիտի ապրի առանց ազգութիւնների . երբ ազգութեան զաղափարը պիտի փոխւի եւ ընդարձակւի այնպէս , ինչպէս փոխւել եւ ընդարձակւել է «ցեղ» զաղափարը՝ արիւնակիցների մի սեղմ շրջանից մինչեւ ազգեր եւ երկիրներ ընդգրկող ընդարձակ մի ընդհանրութիւն : Երբ մասդիկութիւն եւ ազգութիւն հոմանիշներ պիտի դառնան : Հաւատում եմ մի այնպիսի մարդկութեան , որն այսօրւայ եկաղեցիների տեղ գիտութեան , գեղարւեստի տաճարներ պիտի կառուցանէ . այդ աղօքատները աշխատանոցների պիտի վերածէ , աշխատանքը դարձնէ մարդու ամենահզօր եւ յուսալից աղօք էր : Երբ ազնւացած եւ բախտաւոր-

ւած մարդկութիւնը «Հայր-մեր»-ի փոխարէն քանառտեղի հետ միասին աշխատանքի փառաբանութիւնը պիտի անի շարունակ՝

«Աշխատանք, ազնիւ տուրքդ երկնային,
Դու, որ մարդկանց ֆրկութիւն ևս քերում,
Մխիրարում, կազդուրում ամէնքին,
Ով քեզ իր ծառայութիւնն է քերում»:

* * *

Հաւատում եմ մի գեղեցիկ ապագայի, ոսկեշող եւ յուսառատ, երբ մետաղը չպիտի հալի եւ մարմարը յղկի՝ մարդկանց արձաններ կանգնելու համար, այլ միայն գեղեցկութիւնը պատկերանորելու. որովհետեւ մարդիկ իրենց մէջ իսկ կենդանիօրէն պիտի պատկերացնեն մարմարի պարզութիւնն եւ մաքրութիւնը ու մետաղի ազնութիւնը։ Իսկ իրենց առաքինութիւնները մարմարից եւ մետաղից աւելի դիմացկուն պիտի լինին։ Երբ չպիտի ասի թէ՝ մարդը մաքուր է բիւրեղի նման, այլ թէ՝ բիւրեղը մաքուր է որպէս մարդ։

Հաւատում եմ, այո՛, այն հեռաւոր ապագային, երբ առաքինի մարդկանց կանգնած արձանները արժէք չպիտի ունենան այլեւս եւ ոչ ոքին պիտի հետաքրքրեն դրանք, որովհետեւ «մարդ» եւ «առաքինի» զաղագարները անրածանելի պիտի լինին իրարից. իսկ առաքինութիւնը իրենից դուրս գարձատրութիւն չպիտի որոնէ։

Ես հաւատացողն եմ վաղւայ Սօցիալիստական համատարած կարգերին, որոնք պիտի քերեն իրենց հետ իմ յոյսերի իրականացումը։ Որոնք պիտի վերացնեն մարդկային քշւառութիւնները իրենց բոլոր աղաղակող կողմերով, իրենց մեծագոյն մասերով։ Հաւատում եմ, որ այդ չպիտի լինի վերջը ամեն տեսակ կուի, այլ

սկիզբը՝ նորի, — ո՞չ ցեղային, դասակարգային, դիւանագիտական, անհատական, ազգային կամ կրօնական, այլ մտքի, գիտութեան, անարատ զգացմունքների, գեղարւեստի։ Սկիզբը մի կռւի, որ աւելի սխստեմատիկօրէն ժան մինչեւ այժմ, պակաս դաժան այսօրւանից, աւելի նպատակագիտակ եւ պլանաշափ ժան այսօր, պիտի մղւի բնութեան դէմ, չարիքի դէմ, մարդկութեան յետազայ գարգացումը խափանող խոշընդուների դէմ, մղւած՝ ընդհանրական ուժերով։

Հաւատում եմ, որ այդ կռւով օդը պիտի նւանւի այնպէս, ինչպէս երկիրն է նւանւել. որ դա պիտի նւանէ նոյն խոկ երկինքը, ասէք թէ աստղերը իջեցնէ երկրի վրա, հաստատէ կապը երկրի եւ երկնիքի միջեւ. — ո՞չ, սակայն, այն միստիկ, գերբնական եւ անսանցանելի ուղիներով, որոնցով կրօններն են կապել՝ երկինքն ու երկիրը մշտապէս իրարից հեռու պահելու համար, այլ օդի ալիքներով, լոյսով եւ նառազայքներով, հիւլեներով, ելեկտրականութեամբ։

* * *

Եւ դեռ աւելին եմ հաւատում ես։

Ես հաւատում եմ, որ սօցիալիզմը մարդկային առաջադիմութեան վերջին խօսքը չէ, որ դա մի էտապն է, մի սանդուղքը՝ մարդկային պրօգրեսի անվերջ վերիքի վրա. որ մարդկութիւնը ընկերվարական աշտարակի բարձունքները թեւակոխելով, նոր ուժեր պիտի ժողովէ, մտքի եւ զգացմունքի նորանոր բարիչներ պիտի առնէ, եւ սահմայ դէպի վեր, մշտապէս որոնելով նոր բարձունքներ, աւելի ընդարձակ հորիզոններ, աւելի ջենու եւ յատակ մբնույուն։

նման՝ բնուրեան ծոցում ազատօրէն քափառող տուրիստին, սօցիալիստական Ալպերի բարձունքներից նորանոր վերելլքներ փուած պիտի տեսնի իր առջեւ, որոնք ծածկւած էին իր աշխերից, մինչեւ որ նա լեռան սոսրոտումն էր գտնուում, կամ ցածր մի զագարի վրա։ Եւ հազիւ մօտակայ բարձրութիւնը յաղթահարած, նորանոր ուրիշ բարձրութիւնների սանդուղքներ պիտի բացւին նրա առջեւ։ Իսկ նա մշտապէս նիզեր պիտի բափէ, շարունակ պիտի բարձրանայ, որովհետեւ մարդկային զարգացումը նոյնիքան անվերջ է, որքան տիեզերքը ինքը. Եւ նրա ծգոտումը՝ դէպի վեր նոյնիքան անխորտակելի, որքան Ալպեան բարձունքները։

«Մենք շարունակ դէպի վեր ենք ծգոտում,

«Արդեօք կամենում ենք այդ, թէ ոչ»։ —

— երգել է Ալֆրեդ դը Միւսէն, նոր ժամանակների, մարդարէններից մէկը։

* * *

Հաւատում եմ աւելի հեռաւոր մի մարդկութեան, որի համար մեր դարու ժաղաքակիրք կոչւած մարդկութեան պատմութիւնը հազար ու մի զիշերային հենաքնների պէս պիտի երեւայ. որը պիտի կարդացւի ռակայն, ոչ թէ հանոյալից յափշտակութեամբ, այլ օարուափով եւ զարդուանքով։ Երբ մարդկութեան շանրահարւած միտքը կանգ պիտի առնի մի մեծ հակասութեան առջեւ եւ հարցնէ վարանու. «Իրա՞ւ է, որ դարեր առաջ եւրոպական ժաղաքակիրք պետութիւնները տարիներ շարունակ, առանց մի օր դադար առնելու, կոտորել, ոչնչացրել են իրար։ Իրա՞ւ է, որ նրանք միլիօններոր անմեղների արիւն են քափել. բոյ տւել, որ զագանօրէն մորքուին եւ պատառ-պատուի լինին երախաններ եւ կանայք։ Իրա՞ւ է, որ նրանք սուել

են շարումակ, կեղծել, դժոխային դաւեր լարել իրար դէմ, սրբապղծել ամեն սրբութիւն, կորցրել ամեն քանականութիւն, մոռացել ամեն բարոյականութիւն։ Իրա՞ւ է, որ այդ պետութիւնները իրենց քրիստոնեայ անունն են եղել տալիս, որ ծագում է Քրիստոս անունվ հեղափամբոյք, բարի, զրած եւ առաքինի, մարդասէր եւ այլասէր մարդու վարդապետութիւնից, որք ժարողել է քէ՛ մի՛ սպանիր, սիրի՛ր մօտիկիդ եւ քըշնուդ։

«Իրա՞ւ է, — այսպէս պիտի շարումակէ հարցնել ապագայ մարդկութեան զարգացած խիդնը, — իրե՞ւ է, որ այն ժամանակներում Թիւրքիա կոչւած մահմեդական երկրի մէջ նրա կառավարութիւնը իր դաշնակից քրիստոնեայ պետութիւնների հովանաւորութեամբ՝ կուլտուրական մի անմեղ ժողովուրդ ամբողջովով ոչնչացնելու ոնրապարտ նիգն է քափել. ուր հազարաւոր մանուկներ սրախողխող են եղել. ուրիշ հազարաւորների գանձեր ջարդւել եւ ուղեղները դուրս քափւել. ուր մայրեր հարիւրներով իրենց զետն են նետել՝ մարդկանց կողմից նրանց համար պատրաստւած նակատազրից ազատւելու համար. կանայք մորքուել նախիրների պէս, մարդիկ ոչնչացրւել մարախի նման։»

«Իրա՞ւ է, որ այն ժամանակներում Գերմանիա կոչւած քրիստոնեայ պետութեան մէջ, որի գլուխ կանգնած իշխողները պարծեցել են շարումակ իրենց բաղաբակրութեամբ, մարդիկ են գտնւել, որոնք արդարացրել են նոյն խոկ Թիւրքիայում կատարւած բոլոր զագանութիւնները։ Իրա՞ւ է, որ եւրոպական քրիստոնեայ պետութիւնների մէջ եւս նման զագանութիւնները բոյլ են տրւել նաեւ քշնամի ժողովուրդների, զերիների եւ զինուրների հանդէպ։ Իրա՞ւ է . . .»։

Այս', ես հաւատում եմ այն օրւան, երբ մի հեռաւոր, սօցիալիստական մարդկութիւն քարոյական իր անսահման քարձունեներից անկարող պիտի լինի տեսնել ստորեւ ընկած XX-րդ դարու նահինը։ Հաւատում եմ, որ քացած այն վէնի մէջ, թէ՛ եղե՞լ է արդեօք մարդկային ապականութեան, ինքնոչնչացման այդպիսի մի շրջան, յաղքանակը պիտի մնայ նրան, ով կյայտարքէ, թէ՛ չէ՛, այդ բոլորը հեքեարներ են, ստեղծւած՝ մարդկային վառ երեւակայութեան քափով, այնպէս, ինչպէս Դանտէն իր դժոխքն է ստեղծել. որ մարդկութիւնը չէր կարող ապրել այդպիսի օրեր. որ դա վերացումը կլիներ մարդկութեան. որ անկարելի է այդ. որ անմարդկային է այդ. որ անհասկանալի է այդ։ Այս', հաւատում եմ ես ապագայի մի այդպիսը մարդկութեան, որ դարեր առաջ տեղի ունեցած «նըշմարտութեանը» չպիտի հաւատայ եւ այն չպիտի հասկանայ, որովհետեւ ինքը տարբեր նշարտութիւններ պիտի մարմնացնէ եւ արդարութեան տարբեր սկզբունք պիտի դաւանի։

* * *

Զգտել դէպի այս հաւատալիքները, իդէալի տեղ ընդունել դրանք, զործել դրանց համար, ջանալ իրականացնել այդ բոլորը՝ կնշանակէ ունենալ ամենամեծ, ամենաքարձը հաւատքը։ Կնշանակէ դէն շպրտել կրօնական նախապաշարումները՝ որպէս կիտրոնի մի կնեալ, որից վերջին կարիլ դառն հիւրն անգամ դուրս է մրգւած։

Ես հաւատում եմ, այս', այս բոլորին. դրանց հետ կապւած նաև ուրիշ շատ «հրաշքների»։ Բայց իմ այդ հաւատը մի կոյր հետեւողութիւն չէ նրան, ինչ ես

զգում եմ. դա արդիւնքը չէ մի վառ երեւակայութեան. դա ինքնախաբէութեան ճգուռմից չի առաջանում. այլ դա մի հաւատք է, որ համոզումից է բղխում. մի հաւատք, որ ներդաշնակւում է մարդկային զարգացման մինչայժմեայ օրէնքների հետ, հիմնւած է այդ օրէնքների վրա.— այնպէս, ինչպէս ինքն եմ հասկացնել այդ օրէնքները։ Մի հաւատք, որ հաստատւած է զիտութեան այն անսասան սիմերի վրա, որոնք կառուցել են մինչեւ այժմ մարդկային արարչագործ մտքի կողմից, եւ որքան որ դրանք մատչելի, ըմբռնելի են եղել իմ նանաչողութեան։ Մի զիտական հաւատք, մի համոզում՝ ընդդեմ կրօնական մի հաւատքի։

* * *

Եւ դեռ աւելի՞ն։

Ես հաւատում եմ, որ իմ կեանիքի տեւողութիւնը, ինչպէս եւ իմ ժամանակակիցներից ունէ մէկի կեանիք տեւողութիւնը բաւական չէ, որպէսզի ես եւ իմ ժամանակակիցները ապրել կարողանանք այն Մեծ Օրը, որը պիտի բերէ իմ հաւատալիքների իրականացումը ամբողջութեամբ։ Բայց դրա հետ միասին հաւատում եմ նաև, որ դա պատճառ չէ, որպէսզի մենք մեր ժամանակակիցների հետ չաշխատենիք այդ Օրւայ համար. այլ մի հիմք եւ մի իրամայական, որ մեր ամրող ուժերը հաւաքենիք, լարենիք եւ բովանդակ էութեամբ այդ աշխատանիքին նւիրւինիք. կառուցենիք այդ Մեծ Օրը զրչով, խօսքով, գործով։ Եւ ամենից շատ գործով։

Հաւատում եմ, խորապէս հաւատում, այնպէս, ինչպէս մի մոլեռանդ քրիստոնեայ կարող է հաւատալ. չէ՛, աւելի՛ քան մի մոլեռանդ քրիստոնեայ կարող է հաւատալ, որ ինքն անձամբ չպիտի կարողանամ վա-

յելել այդ Մեծ Օրը՝ իր ամբողջ լուսաւորութեամբ մեծ հանոյքը մարդկային համափիւռ եղբայրակցութեան, ազգերի համերաշխութեան, ազատութեան, երրոյ, ընդհանուր հաւասարութեան, ազատութեան, երշանկութեան։ Հաւատում եմ, որ այդ Մեծ Օրւայ արշալոյսի շողերը միայն հազիւ հազ պիտի կարողանան շոյել իմ տեսողութիւնը։

Եւ . . . իմ այս վերջին հաւատն է միայնակ, որ ես չեմ կարող հիմնաւորել զիտութեան միջոցով, պատմակոն փորձառութեամբ, մարդկային առողջախոհութեամբ։

Վ. ԵՐԶ.



ԿԱՐԵՒՈՐ ՎՐԻՊԱԿ

4-րդ էջի վրա, վերէն սկսեալ 11-րդ տողը տպւած է՝
որքան որ անոնք ընթերցանութեան շրջանը կչօշափեն,
որքան որ անոնք ընկերաբանութեան շրջանը կչօշափեն,

20-րդ էջի վրա, վարէն սկսեալ 7-րդ տողը տպւած է՝

Տե՛ս, սա ալ երրորդն է իմ արձաններից։ Գրա-
պիտի ըլլայ

Տե՛ս, սա էլ երրորդն է իմ արձաններից։ Գրա-

66-րդ էջի վրա, վարէն սկսեալ 8-րդ տողը տպւած է՝
դացայ իմանալ՝ ժպի՞տ էր այդ ցաւակցութի՞ւն։ Բե՛-
պիտի ըլլայ

դացայ իմանալ՝ ժպի՞տ էր այդ, ցաւակցութի՞ւն, և ւ-

97-րդ էջի ամենէն վարի տողը տպւած է շատ ազօտ։


ոլիտի ըլլայ

Հաւատում եմ, որ սօցիալիստական մարդկութիւնը

98-րդ էջի ամենէն վարի տողը նայնպէս տպւած է ազօտ։

ոլիտի ըլլայ

լինին երախաներ եւ կանայք։ Երա՞ւ է, որ նրանք ստել



Բ Ա Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Խ Ի Խ Ն

	Եջ
1. Գու Հայրենասէր Ես, Ես՝ Ոչ	11
2. Քո Արձանները Եւ Իմ Արձանները	19
3. Խեղճուրինը Շքեղուրեան Մէջ Եւ Խեղճուր- եան Շքեղուրինը :	25
4. Իմ Դաւանանները Եւ Քո Հերոսները	32
5. Հիմ Եւ Նոր Յոյսեր	39
6. Քո Արցունինները Եւ Նրա Արցունինները	45
7. Ես Եւ Գու	49
8. Քո Տիրոջ Ոնիրները Եւ Քո Ոնիրները	60
9. Բանտի Մէջ Եւ Բանտից Գուրս	65
10. Իմ Հայրենիքը Եւ Քո Հայրենիքը	75
11. Իմ Աստւածները Եւ Քո Աստւածները	83
12. (Վերջաբանի ՏԵՂ) Իմ Հաւատիք	92

ԿԱՐԵՒՈՐ ՎՐԵՊԱԿ

66-րդ էջի վրա, վարչն սկսեալ 8-րդ տողը տպւած է՝
դացայ իմանալ՝ ժպի՞տ էր այդ. ցաւակցութի՞ւն, քե՞-

ու ի ա ի թ ւ ա յ շ

դացայ իմանալ՝ ժպի՞տ էր այդ. ցաւակցութի՞ւն. ու

ՅԱՂԻԱԾՔՆԵՐ

«Գիտութիւն եւ Դաստիարակութիւն» Հրատարակ-չական ընկերութեան կանոնագրէն:

1. Ընկերութեան կրնառւած անունն է «Գիտ-Դաս» անդլիերէն՝ **Git-Das Publishing Co.**

2. Ընկերութեան նպատակն է՝ տալ հայ ընթերցողներուն ընկերային գաստիարակութեան տեսակէտէ օդակար գրքեր՝ հայերէն լեզով:

3. Ամեն անհատ (երկու սեռէ) ընկերութեանս տարեկան միամւագ 5 տօլար վճարելով՝ կդառնայ ընկերութեանս անդամ:

4. Միանւագ 10 տօլար կամ աւելի վճարողներ կարձանադրեն որպէս պատույ անդամ:

5. Ամեն անդամ կստանայ ընկերութեանս մէկ տարւայ բոլոր հրատարակութիւններէն մէջմէկ օրինակ՝ ձրիաբար:

6. Ամեն պատույ անդամ կստանայ ընկերութեանս բոլոր հրատարակութիւններէն երկուական օրինակ՝ երեք տարի շարունակ:

5. Բոլոր պատույ անդամներու անունները կհրատարակեն ընկերութեանս թիւ 2 հրատարակութեան մէջ, վերջին էջերու վրա՝ իսկ այնուհետեւ՝ բոլոր միւս հրատարակութիւններով յաջորդաբար:

7. Ունէ անդամ կամ պատույ անդամ իրաւունք ունի ընկերութեանս հրատարակչական դործին օդնելու նպատակու՝ որոշ ձեռնարկներ ընել՝ ընկերութեան վարչութեան դիտութեամբ: Դոյցացած գումարները պիտի ուղարկեն ընկերութեանս՝ վարչութեան:

A ''
57125

ԳԻՒՆ՝ ԹԵՂՐԱԼԱՂԱԳՄ 50 ՍԵՐ.

ԼԱՐԱԼԱՂԱԳՄ 75 ՍԵՐԸ

ԲԱԼՈՐ ապողրանքները կամիսիլ

ՄԵծագանակ ապողրանքներու համար 30% զեղչ

ԶԵՔՆԵՐԸ ուղարկել

GIT - DAS PUBLISHING CO.

62 P. O. Box Madison Sq. Sta.

New York, N. Y.

Երկու ամիսէն լոյս կտեսնէ

Սօցեանի «ԱՆՀԱԽԱՏԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ» (Մաս Ա.)

Որպէս «Գիտ—Դաս» Մատունաշարի թիւ 2

Սօցեանի այս աշխատութիւնը բաղկացած է 4 մուսերէ, մօտ 600 էջերով։ Զայն մաս առ մաս լոյս կընծայենք՝ ոռոկ դրամական պատճառներով։

Հեղինակաւոր անձնաւորութիւն մը ձեռագիրը կարդալով՝ Սօցեանի այս դրւածքի մասին արտայայտուծ է հետեւեալ կերպով։

«Իր տեսակին մէջ, Հայերէն լեզով դրւած ամենանշանակույթից դրւածքն է։ իսկ օտար դրականութեան մէջ քիչ մրցուկիցներ ունի»։

«Անհաւատի Նամակներ» Մաս Ա. մօտ 150 մեծագիր էջ
Գիւն՝ 75 ՍԵՐԸ

Ապողրանքներ կընդունել

Մէկ օրինակ «Անսանձ Թոփի,
«Անհաւատի Նամակներ» Մաս Ա.

ԳԱԱ Քիմնարար Գիտ. Գրադ.



220057125